

ՕՏԱՐ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ  
ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ  
ՄԱՍՆ Ը. ՉԻՆԱՐԷՆ

Ներկայ յօդուածով շարունակում ենք օտար լեզուների տա-  
ռադարձութեան կանոնները լուսաբանող յօդուածաշարքը<sup>1</sup>, որի  
սոյն՝ ութերորդ մասը, նուիրում ենք չինարէնի յատուկ անուն-  
ներին:

Ինչպէս շարքի նախորդ յօդուածներում, այստեղ վերանայե-  
լու ենք գոյութիւն ունեցող իրավիճակը, փորձելու ենք գիտա-  
կան հիմքերի վրայ դնել չինարէնի տառադարձութիւնը եւ  
քննութեան ենթարկել դրա մի շարք նրբութիւններ: Մեր այս  
մօտեցումը բնականաբար չի ենթադրում վերջնական լուծում:  
Այն միեւնոյն ժամանակ նպատակ ունի մասնագէտ հասարակու-  
թեան ուշադրութիւնը սեւեռել խնդրի վրայ:

Յօդուածները չծանրաբեռնելու եւ միեւնոյն բանը մի քա-  
նի անգամ չկրկնելու համար՝ յօդուածների նախաբաններն ու  
ամփոփումները լինելու են հակիրճ: Այդու ամենայնիւ, մեր ձեռ-

1 ԱՐՄԷՆ ՄԻՓԱՅԷԼԵԱՆ, Օտար Յատուկ Անունների Տառադարձութեան  
Սկզբունքները (Մասն Ա. – մերձաւորարեւելեան լեզուներ), ի «Հայկա-  
գեան Հայագիտական Հանդէս», Խ (2020), 341-364: Նոյն, Օտար Յատուկ  
Անունների Տառադարձութեան Սկզբունքները (Մասն Բ. – դասական լե-  
զուներ, հին յունարէն եւ լատիներէն), ի «Բազմալեզ», ՃՀԸ (2020),  
թիւ 1-2 304-336: Նոյն, Օտար Յատուկ Անունների Տառադարձութեան  
Սկզբունքները (Մասն Գ. – ֆրանսերէն), ի «Հայկագեան Հայագիտական  
Հանդէս», ԽԱ (2021), 443-466: Նոյն, Օտար Յատուկ Անունների Տառա-  
դարձութեան Սկզբունքները (Մասն Դ. – անգլերէն), ի «Հանդէս Ամսօ-  
րեայ», ՃԼԵ (2021), 197-246: Նոյն, Օտար Յատուկ Անունների Տառա-  
դարձութեան Սկզբունքները (Մասն Ե. – գերմաներէն), ի «Բազմալեզ»,  
ՃՁ (2022), թիւ 1-2, 277-303: Նոյն, Օտար Յատուկ Անունների Տառա-  
դարձութեան Սկզբունքները (Մասն Զ. – իտալերէն եւ սպաներէն), ի  
«Բազմալեզ», ՃՁ (2022), թիւ 3-4, 271-300: Նոյնի Օտար Յատուկ Ա-  
նունների Տառադարձութեան Սկզբունքները (Մասն Է. – ռուսերէն, հա-  
մեմատութեամբ սլաւոնական այլ լեզուների), ի «Հայկագեան Հայագի-  
տական Հանդէս», ԽԲ (2022), թիւ 2, 169-198:

նարկութեան տեսական գաղափարներին ծանօթանալու համար, ընթերցողին հրաւիրում ենք աչքի անցկացնել նախորդ (մասնաւորապէս՝ առաջին երեք) յօդուածների նախաբանները, տեսական մասերն ու ամփոփումները:

Երկար տարիներ Հայաստանում գործող Տերմինաբանական կոմիտէ (Եզրաբանական յանձնաժողով) կամ Լեզուի պետական տեսչութիւն անունը կրող զանազան մարմինները չեն անդադարձել չինարէնի սկզբունքային խնդիրներին, այն է՝ գիտական հիմքերի վրայ դնել չինարէնի տառադարձութիւնը, կարգաւորել դրա կանոնները եւ մասնաւորապէս՝ ուսումնասիրել այդ լեզուի հնչիւնաբանութիւնը՝ գիտական հայկաբան տառադարձութիւն մշակելու նպատակով<sup>2</sup>: Չինական անունների հարցում՝ ուսերէնի անսացողութեան տակ գտնուող սովետահայերէնը<sup>3</sup> յարել էր ուսերէնի միջնորդութեամբ ժառանգութիւն ստացած «չծ-ցգ» թիւր տառադարձութեանը, իսկ արեւմտահայերէնը Սփիւռքում յենուել է անգլերէնի կամ Ֆրանսերէնի աւանդական տառադարձութիւնների վրայ:

Մինչդեռ՝ Չինաստանի ու չինարէնի մասին հայերս լսել ենք շատ վաղուց: Մովսէս Խորենացու «Ճեւաց աշխարհի» նկարագրութիւնը<sup>4</sup> յուշում է, որ մեր ուսեալներին անծանօթ չէր «հիւսիս-արեւելեան» հեռաւոր այդ երկիրը: «Ճեւ» ձեւը եղել է մեր այսօրուայ «չին» արմատի առաջին (եւ փոխատու լեզուին գուցէ աւելի հարազատ) արտայայտութիւնը հայերէնում («չին»ը ըստ երեւոյթին դրա պարսկական ձեւն է):

Վերջին տարիներին չինարէնի կարեւորութիւնը Հայաստանի ու հայերէնի համար գնալով աճում է. Չինաստանի հետ կապերը օրէցօր ամրանում են, այդ երկրում ապրող ու գործող

2 Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկատու (1956-2006), ԲԱՐՍԵՂԵԱՆ, Հ. Խ. (Խմբ.), «Գրդ հրաշալիք» հրտ., Երեւան 2006:

3 «Սովետահայերէն» ասելով նկատի ունենմ արեւելահայերէնի՝ 1920-30-ական թուականներից Հայաստանում հաստատուած մի լեզուալիքակը, որ մինչև 1990ական թուականները ուսերէնի անմիջական, իսկ այժմ՝ աւանդական ազդեցութեան տակ է եղել եւ է: Խօսքը ոչ միայն (եւ այնքան) ուղղագրութեան, որքան բառապաշարի ու շարահիւսական օտարաբանութիւններով յագեցած եւ հայերէնի հարազատ տարրերին խորթ լեզուի մասին է (առաւելապէս տարածուած վարչական, հրապարակախօսական եւ իրաւաբանական խօսքի ու գրականութեան մէջ):

4 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմութիւն Հայոց, Գիրք Բ., ԶԱ.:

Հայերի թիւը մեծանում է, Հայաստանում բացւում են չինարէնի դասաւանդմամբ դպրոցներ: Հայ մարդը այսօր անմիջնորդ եւ անձնապէս է յայտնագործում Ճենաց աշխարհը:

Մի քանի տասնամեակ է, որ աշխարհը փոփոխում ու ճըշտում է չինարէն անունների տառադարձութիւնը: Դրանք ճշտում են եւ իրենք՝ չինացիները, իրենց բազմաթիւ գրադարձութիւններով հանդերձ: ԱՄՆի Խորհրդարանի գրադարանը (Library of Congress), 1990ական թուականներից սկսած, երկարատեւ ու ջանադիր աշխատանքի շնորհիւ իր ամբողջ քարտարանը Վեդ-Ջայլսի գրադարձութիւնից փոխեց հաճու փիճիճի գրադարձութեան (տե՛ս ստորեւ):

Չինարէնը աշխարհի կարեւորագոյն լեզուներից է, եւ հայերէնի տառադարձութեան տեսակէտից՝ անփոխարինելի մի լեզու: Մենք համարում ենք, որ մեր յօդուածաշարքի մէջ չինարէնը պէտք է անպայման իր տեղն ունենայ: Մեր եւ մեր լեզուի պարտքն է՝ ետ չմնալ համաշխարհային զարգացումներից:

ԶԻՆԱՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ  
ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Չինարէնը, աշխարհի ամենաբազմախօս լեզուն լինելով հանդերձ, ունի համեմատաբար ամփոփ տարածուածութիւն: Այն նախ եւ առաջ, եւ գլխաւորապէս, մայրենի եւ պետական լեզու է բուն Չինաստանի (Չինաստանի Ժողովրդական Հանրապետութեան) բնակչութեան մեծամասնութեան, ինչպէս նաեւ Թայուանի (Չինաստանի Հանրապետութեան) բնակիչների համար: Չինարէն խօսում են նաեւ աշխարհի զանազան երկրներում (մանաւանդ Ասիայում՝ Սինգապուր, Մալայսիա...) բնակչութիւն հաստատած չինացի բազմամիլիոն գաղթականներ: Սրանց անձնանունները, ինչպէս եւ ամէն մի չինացու անձնանուն, ճիշտ կը լինէր տառադարձել հէնց չինարէնից (եւ ոչ թէ իրենց բնակած երկրների պաշտօնական լեզուներից):

Չինարէնը մեզ ծառայելու է միաժամանակ իբրեւ «տարանցիկ» լեզու՝ Չինաստանի բազմաթիւ ազգերի ու ցեղերի անձնանուններն ու աշխարհագրական անունները հայերէն տառադարձելու համար: Չինաստանի Հանրապետութիւնը բազմազգ երկիր է՝ տարացեղ ու տարալեզու, եւ հայ լեզուաբանութիւնը անկարող է մերձենալ դրանցից թէկուզ եւ մի փոքր մասին:

Ուստի՝ Չինաստանում բնակող ազգերի մի զգալի մասի համար իբրեւ տառադարձութեան լեզու ընդունելու ենք պաշտօնական գրական չինարէնը:

Չինաստանում բնակում են նաեւ թուրքալեզու զանազան ժողովուրդներ (ուլգուր, դազախ...), որոնց յատուկ անունները երբեմն ստիպուած ենք լինում տառադարձել չինարէնի միջնորդութեամբ: Սակայն արժէ խորհել այլ ուղիներ եւս գտնելու մասին, քանզի թուրքալեզու անունները հայերիս շատ աւելի ծանօթ են անմիջական տառադարձութեամբ:

Դասական չինարէնը («հին» չինարէնի չինարէնի «գրաբարը») Չինաստանի պաշտօնական գրական լեզուն էր ընդհուպ մինչեւ Խ. դարի սկզբները: Այն իր տեղն աստիճանաբար զիջեց նոր գրական լեզուին. իբրեւ պետական ու համագգային լեզու հռչակուեց մայրաքաղաք Պեկինի եւ նրա յարակից գաւառների բանաւոր լեզուի հիման վրայ ձեւաւորուած գրական տարբերակը (կոչում են Guóyǔ (կ[ու]ոյու)՝ «ազգային (կամ՝ պետական) լեզու», կամ Pǔtōnghuà (փուօքնիուա)՝ «հասարակաց, ընդհանուր լեզու»): Դասական չինարէնի ազդեցութիւնը սակայն մինչեւ այժմ էլ զգալի է տարբեր մակարդակներում, այն ուսուցանում են դրպրոցներում ու համալսարաններում: Այդու ամենայնիւ, Չինաստանի պատմական անունները տառադարձելու ենք բացառապէս արդի գրական չինարէնից, քանզի, մի կողմից՝ հայերիս անհասանելի է դասական չինարէնի հնչիւնաբանութիւնը, միւս կողմից՝ դժուար է զանազանել թէ Չինաստանի պատմական այս կամ այն դէմքը տեղական ինչ ազգութեան է պատկանել եւ թէ ո՛ր լեզուն (բարբառն) է եղել նրա մայրենին:

#### ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀՆՁԻԻՆԱԿԱՆ ՍԿՋԱՌԻՆՔՆԵՐԸ

Ինչպէս ամէն յօդուածում նշում ենք, հայերէնի հնչիւնաբանութիւնն ու ուղղագրութիւնը ունեն սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է կիրարկել իւրաքանչիւր լեզուից կատարելիք տառադարձութեան ժամանակ: Յիշեցման կարգով ստորեւ ամփոփ ներկայացնում ենք հայերէն տառադարձութեան՝ մեր առաջին երեք յօդուածներում արծարծած սկզբունքները: Յօդուածները չծանրաբեռնելու համար մանրամասները չենք կրկնում, եւ ընթերցողին հրաւիրում ենք, նախքան որեւէ լեզուի տառադարձութեանն անդրադառնալը, անպայման ծանօթանալ այդ սկզբ-

բունքներին, առանց որոնց դժուար է ըմբռնել մեր տեսակէտները:

Ա. Պայթական («բ-պ-փ», «գ-կ-ք», «դ-տ-թ») եւ պայթաչփական («ջ-ն-չ», «ձ-ծ-ց») բաղաձայնների եռաստիճան կարգը հայկաբան տառադարձութեան ողնասիւններից մէկն է:

Բ. Տառադարձութիւններում «է»ն գրում ենք միայն բառավերջին, կամ այլուր՝ ձայնաւորից առաջ: «Ե»ը հայերէնի [e] հնչոյթն է եւ այն գրում ենք մնացած դիրքերում՝ բառամիջում թէ բառասկզբին (բաղաձայններից առաջ): Բառասկզբի «ե»ը պարտադիր չէ [jɛ] արտասանել. օտար անունների մեծ մասում այն գերադասելի է իր մաքուր հնչումով [e] արտասանել:

Գ. Օտար [o] հնչիւնը տառադարձութիւնների մէջ ամէնուր արտայայտում ենք մեքորպեան «ո» տառով: Բառասկզբին, ինչպէս եւ «ե»ի պարագայում, պարտադիր չէ «ո»ն [ɔn] ընթերցել: Կիրիկեան ժամանակներից մուտք գործած կլոր «օ» տառը տառադարձութեան համար չէ:

Դ. Բառամիջում եւ բառավերջին խոլասփում ենք «ը» գրելուց:

Ե. Օտար [v] (նաեւ [w]) հնչիւնը հայերէն արտայայտում ենք «վ, ւ, ու» տառերից մէկով, ըստ հայոց դասական ուղղագրութեան կանոնների: Բառասկզբում գրում ենք միմիայն «վ»: Ըստ հնարաւորութեան՝ օգտագործում ենք հայերէնի «աւ, եւ, իւ» երկբարբառները: Բառամիջում՝ բաղաձայնից յետոյ եւ ձայնաւորից առաջ, գերադասում ենք գրել (այնտեղ ուր դա թոյլ է տալիս ստուգաբանութիւնը) «ու»:

Զ. Օտար «ia (ja), ie (je), ii (ji), io (jo), iu (ju)» համակցութիւնները արտայայտում ենք բառասկզբին «յա, յե, յի, յո, յու» կապակցութիւններով, բառամիջում՝ «իա, իե, ի (կրկնակ «իի»)ն պարզում է), իո, իու» (եւ ոչ թէ մեր երկբարբառներով): Բառասկզբի «յ» տառի արտասանութիւնը անհրաժեշտաբար [h] չէ: Աւանդական անուններում այն [h] է հնչում, սակայն նոր տառադարձութիւնների մէջ այն պէտք է իր ձայնով [j] արտասանենք:

է. Հայերէնի երկբարբառներն ու եռաբարբառներն են. «այ, ոյ, աւ (օ), եւ, իւ, եա, ւո, եայ, եաւ (եօ), ւոյ»: Որեւէ տառադարձութեան ժամանակ կարելոր է յարգել սրանց գրութեան կանոնները եւ չյօրինել նոր կապակցութիւններ:

Ը. Նոր լեզուների տառադարձութիւնների մէջ օտար [r] հնչիւնը ամէնուր գրում ենք «ր», բացառութեամբ բառասկզբի,

ուր գրում ենք «ո»: «ո»ի գրութիւնը «ն»ից եւ «լ»ից առաջ պարտադիր չէ<sup>5</sup>:

Այսօր փաստօրէն ունենք տառադարձութեան երեք սկզբունք՝ մեսրոպեան կամ հայկաբան, կիլիկեան (կամ երբեմն՝ արեւմտահայ, սփիւռքահայ) եւ սովետահայ (կամ հայաստանեան) սկզբունքները: Մենք դէմ ենք ե՛լ սովետահայ, ե՛լ կիլիկեան տառադարձութիւններին: Նրանք մի կողմից՝ օտար լեզուների ազդեցութեան, միւս կողմից՝ մեսրոպեան կանոնները զանց առնելու հետեւանք են: Աւելորդ չենք համարում կրկնել, որ օտար լեզուներին յարմարուելու փորձերը կերպարանափոխում են հայերէնը եւ ոտնակոխ են անում մայրենին ամրապնդելու ու միասնական լեզու կազմելու ջանքերը:

ԶԻՆԱՐԵՆԻ ԳՐՈՒԹԵԱՆ ՈՒ ԳՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ  
(ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ) ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ<sup>6</sup>

Զինարէնի գրութիւնը աշխարհի ամենահին գրութիւններից է եւ աւելի քան երեք հազար տարուայ պատմութիւն ունի: Այն սկիզբ է առել իբրեւ պատկերագիր, այսինքն՝ ամէն նշանագիր մի պատկեր եւ մի գաղափար (իմաստ) է արտայայտել: Բազմադարեան իր հոլովոյթի հետեւանքով պատկերներն անճանաչելի են դարձել, եւ պատկերագրերի թիւն այսօր բոլոր նշա-

5 Հիմնարար այս սկզբունքների մասին աւելի մանրամասն տե՛ս մեր առաջին երեք յօդուածների համառուն բաժիններում (Հայերէն տառադարձութեան հնչիւնա(րան)ական սկզբունքները):

6 Զինարէն լեզուին եւ մասնաւորապէս հնչիւնաբանութեանը ծանօթանալու համար տե՛ս. WHEATLEY, J. K., *Learning Chinese, A Foundation Course in Mandarin*, Yale University Press, New Haven & London 2011, *Sounds and Symbols*, 1-31; ROSS, C. – JING-HENG SHENG MA, *Modern Mandarin Chinese Grammar, A Practical Guide*, 2nd edition, Routledge, London and New York 2014, 3-11; YIP PO-CHING – RIMMINGTON, D., *Chinese, An Essential Grammar*, Routledge, London and New York 2006<sup>2</sup>, 1-7; MATTHEWS, A. – MATTHEWS, L., *Learning Chinese Characters*, Tuttle Publishing, Tokyo | Rutland, Vermont | Singapore 2007, *Soundwords*, 361-365; YUEN REN CHAO, *A Grammar of Spoken Chinese*, The Commercial Press, Beijing 2011, *Phonology*, 47-79; *Oxford Beginner's Chinese Dictionary*, Edited by Boping Yuan and Sally K. Church, Oxford University Press, Oxford 2006; Завьялова, О. И., *Большой мир китайского языка*, изд. 2-е, изд. «Восточная книга», Москва 2014; ՅԱՌ ԶԻԼԻՈՒ – ՅՈՎՍԷՓԵԱՆ, Մ., *Զինարէն, «Լինգվա» հրատ., Երեւան 2009*:

նագրերի միայն մէկ տասներորդն է: Այսօր եւս չինարէնի գրութեան տրամաբանութիւնը յենուած է գաղափարների վրայ (որ սակայն չի բացառում հնչիւնահիմն բազմաթիւ գրելաձեւեր): ամէն ճենագիր (նշանագիր) մի վանկ է եւ մի գաղափար (իմաստային միաւոր՝ բառարմատ, քերականական ձեւ...): Ճենագրերը չեն արտայայտում բառի հնչումը. մարդ պէտք է այն ճենագրի հետ գուգահեռ սովորի ու անգիր անի: Դիցուք՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետութեան անուանումը չինարէն նշանագրերով. 中华人民共和国: Սրա լատինատառ փիւնին (տե՛ս ստորեւ) գրադարձութիւնն է՝ Zhōnghuá Rénmín Gònghéguó:

Ահա նշանագրերի, դրանց լատինատառ «գրադարձութեան», արտասանութեան եւ հայերէն տառադարձութեան համապատասխանութիւնը՝ վանկ առ վանկ:

|                 |          |       |      |      |          |     |       |
|-----------------|----------|-------|------|------|----------|-----|-------|
| ճենագիր         | 中        | 华     | 人    | 民    | 共        | 和   | 国     |
| փիւնին գրով     | Zhōng    | huá   | Rén  | mín  | Gòng     | hé  | guó   |
| հայերէն հնչումը | ճո՛ւն(գ) | խուա՞ | ժը՞ն | մի՞ն | կո՛ւն(գ) | խը՞ | կուո՞ |
| տառադարձումը    | ձոն      | հուա  | ժեն  | մին  | Կոն      | հե  | կո    |

Հայերէն մեր տառադարձութիւնն է (որ այլ բան է քան կենդանի արտասանութիւնը)՝ Ճոնհուա Ժենմին Կոնհեկո: Գրութիւնը չի ասում, թէ ինչու 中 նշանը պէտք է [ճո՛ւն(գ)] կարդանք, իսկ 华 նշանը՝ [խուա՞]: Ճիշտ նոյն կերպ որպէս «1960»-ի գրութեան մէջ ոչինչ չի ասում թէ ինչու «1»-ը պէտք է հազար արտասանենք, «9»-ը՝ ինը հարիւր, «6»-ը վաթսուներեք, իսկ «0»-ն՝ չարտասանենք (կամ «6»-ն ու «0»-ն միասին՝ վաթսուներեք):

Չինարէնի աւանդական այս գրութիւնը զանազան անուաներով են կոչում՝ նշանագիր, գաղափարագիր, վանկագիր, մեհենագիր: Մենք այն պարզապէս կ'անուանենք ճենագիր: Այն ո՛չ վանկագիր է, ո՛չ էլ առաւել եւս տառագիր: Եթէ մարդ ծանօթ չէ չինարէն լեզուին (ոչ միայն գրութեանը, այլ իրեն՝ լեզուին) չի կարող գուշակել թէ ինչպէս պէտք է կարդալ այս կամ այն ճենագիրը: Ճենագրերը հազարներով են հաշուում. վերջին ամենաընդարձակ բառարանները պարունակում են աւելի քան հարիւր հազար նշանագիր: Ոչ մի չինացի չգիտէ դրանց գոնէ եւ կէսը: Գրագէտ են համարուում անձինք, որոնք իւրացրել են ե-

րեք-չորս հազար նշանագիր: Կենդանի՝ գործածութեան մէջ եղած ճենագրերը այսօր մօտ տասը հազար են:

Մեր հայ հասարակութիւնը բնականաբար ի վիճակի չէ հետազօտելու չինարէն լեզուն, որպէսզի ամէն անուան համար իմանայ թէ ինչպէս տառադարձի բառը: Բարեբախտաբար մեր տառադարձութեան համար՝ լեզուաբան մասնագէտներն արդէն մտածել են չինարէն լեզուն այլ նշանագրերով գրի առնելու մասին:

Լատինագիր տարբեր տառադարձութիւններ ու գրադարձութիւններ գոյութիւն են ունեցել եւ աւելի վաղ, սակայն մեզ հասած ամենակարեւորները ԺԹ.-Ի. դարերից են: Լաւագոյններից է (համընդհանուր կարծիքով) Թոմաս Վեդ (Thomas Wade) բրիտանացի գիտաշխատողի 1867ին մշակած եւ այնուհետեւ Հերբերտ Ջայլս (Herbert Giles) մասնագէտի 1892ին բարելաւած գրադարձութիւնը: Այստեղ չենք խորանալու դրա նրբութիւնների մէջ: Յօդուածի վերջում գետեղած աղիւսակները համեմատութեան համար ներառում են նաեւ այդ տառադարձութիւնը:

ԺԹ. դարից է սերում նաեւ Պիոտր Կաֆարով (հոգեւորական անունը՝ Սբ. Պաղաղիոս, ռուս. Палладий, յուն. Παλλάδιος, լատ. Palladius) ռուսագրի ռուսամասէրի մշակած կիւրեղագիր (ռուսական) տառադարձութիւնը: Այն մինչեւ այժմ էլ ուժի մէջ է (չնչին փոփոխութիւններով)՝ չինական անունները ռուսերէն տառադարձելու համար: Խորհրդային տարիներին (եւ մինչեւ այժմ) ռուսերէնի անսացողութեան տակ գտնուող (սովետա)հայերէնը ճանաչում է տառադարձութեան միայն այդ՝ կիւրեղեան սկզբունքը (իր թերութիւններով հանդերձ): Հէնց այդ տառադարձութիւնն է որ մենք անուանեցինք «չժ-ցգ»:

1910ականներին Չինաստանի հանրապետական կառավարութիւնը ներմուծեց նոր մշակած հնչիւնային մի գրութիւն (այբուբեն)՝ Zhuyin (注音), հնչում է [խու-իւն], բառացի նշանակում է «հնչիւնագիր»: Անուանում են նաեւ պոփոմոֆո (bopomofo)՝ այբուբենի առաջին չորս տառերի անուններով (ㄅ ㄆ, ㄇ ㄏ, ㄉ ㄊ, ㄋ ㄌ): Կազմուած է 37 նշանագրից եւ երանգի չորս նշաններից<sup>7</sup>, եւ այդպիսով կարող է գրի առնել չինարէնի ամէն մի հնչիւն: Այսօր այդ այբուբենի գործածութիւնը առաւել տարածուած է Թայուանում քան բուն Չինաստանում: Այն մինչեւ այժմ գե-

7 Առաջին երանգը նշան չունի: Երանգների մասին ստորև:

րակչոող հնչիւնագիրն է եղել Թայուանի տարրական դպրոցներում, ինչպէս նաեւ բառարաններում՝ ճենագրերը հնչիւններով գրադարձելու համար: Մեր օրինակներում սա չենք յիշատակի (թէեւ այն որոշ տեղերում աւելի տրամաբանական է, քան պաշտօնական հանու փիլիսոփայը), քանի որ այն քիչ բան է աւելացնելու մեր տառագրաբանութեանը: Յօդուածի վերջի յաւելուածներում գետեղել ենք եւ դա:

Չինաստանում՝ համայնավարների իշխանութեան գալուց յետոյ, 1950ականներին մշակուեց եւ տարածուեց գտաւ այսպէս կոչուած հանու փիլիսոփայ գրադարձութիւնը (Hànyü Pīnyīn, արտասանութիւնը՝ [հան-իւ փիլի-իլի]): Հիմնուած է լատինական գրի վրայ: Դրա նպատակը ոչ թէ չինարէնը այսուհետեւ լատինատառ գրելն է, այլ չինարէն նշանագրերի համար առաջարկել հնչողական մի համակարգ՝ նշանագրերի հնչումը ուսուցանելու համար տարրական դպրոցների աշակերտներին, ինչպէս նաեւ օտարներին: Այսօր այն պարտադիր է բուն Չինաստանում (Չինաստանի Ժողովրդական Հանրապետութիւնում), եւ երեխաները դպրոցում անպայման սովորում են այն՝ ճենագրերը գրադարձելու եւ դրանք ճիշտ արտասանելու համար: Օր օրի աճում է փիլիսոփայի նշանակութիւնը. համակարգիչները այն պարտադիր դարձրին, իսկ այսօր Ոստայնը (Համացանցը) եւ ընկերային ցանցերը լի են այդ գրութեամբ: Որքան էլ չինարէնը հաւատարիմ է աւանդական իր ճենագրութեանը, լատինագիր փիլիսոփայ անխուսափելի աղբիւր է չինարէնի հնչիւնաբանութիւնը ուսանելու համար:

Փիլիսոփայ մշակել եւ դրան պաշտօնական ճանաչում է տուել չինական պետութիւնը մի դարում, երբ թուում էր թէ լեզուաբանութիւնը այլեւս գաղտնիքներ չունի: Բազմաթիւ ազգեր գրութիւն ստացան քսաներորդ դարում, սակայն դրանք բոլորն էլ ունեն իրենց թերութիւնները: Չինարէն փիլիսոփայ նոյնպէս գերծ չէ թերութիւններից. գրութեան եւ հնչման միջեւ կան լեզուական առումով չհիմնաւորուած տարբերութիւններ: Գրութիւնը կարող էր աւելի տրամաբանական լինել (կը տեսնենք ստորեւ): Այստեղ է, որ կրկին ու կրկին զարմանում ու հիանում ես եւ. դարում հայերէնի հնչիւնաբանութիւնը «ուսումնասիրած» ու հայոց գրերը ստեղծած Մեսրոպ Մաշտոցի հանճարով: Կենդանի հնչումը գրութեանը յարմարեցնելու արուեստը գուցէ տրուած չէ ամէն մի մարդու, նոյնիսկ լեզուաբանական նրբութիւններին ծանօթ քսաներորդ դարի մասնագէտներին:

*Ուշադրութիւն. Վեդ-Ջայլսի, Պաղադիոսի եւ նոյնիսկ փի-  
նից գրութիւնները աւելի շուտ գրադարձութիւն են քան տառա-  
դարձութիւն. դրանց նպատակը չի նարէն բառի հնչումը ճշտիւ  
հաղորդելն է, նոյնիսկ եթէ գրութիւնը խորթ է գալիս անգլերէն  
կամ ռուսերէն լեզուներին: Եթէ ուզենայինք գրադարձութիւն  
կատարել (այսինքն՝ հայերէն տառերով չի նարէն գրել), մենք էլ  
հանգիստ կարող էինք դա անել, նոյնիսկ աւելի յաջող քան վե-  
րոնշեալ լեզուները (ինչպէս արել ենք ժամանակին թուրքերէնը  
հայատառ գրի առնելու համար): Սակայն դա կը լինէր ծառա-  
յութիւն մատուցել ոչ թէ հայերէնին, այլ չի նարցիներին ու չի-  
նարէն լեզուին: Մեր նպատակը բնականաբար մե'ր լեզուին ծա-  
ռայելն է:*

**ՁԻՆԱՐԷՆԻ ՀՆՁՈՅԹՆԵՐՆ ՈՒ ՀՆՁԻԻՆՆԵՐԸ**

*Քանզի հանու փինիցը չի նարէնի պաշտօնական պարտադիր  
գրութիւնն է, այն լինելու է հայերէնի տառադարձութեան մեր  
հիմնաքարը, այսինքն՝ տառադարձութեան ելակէտ ենք ընդունե-  
լու փինից գրութիւնը (այն հնարաւորինս ճշտելով կենդանի  
հնչողութեամբ ու ստուգաբանութեամբ): Ինչպէս նշեցինք վերը՝  
փինից գրութիւնը ստեղծուած է արդի գրական չի նարէնի հա-  
մար, որի հնչողութիւնը հիմնուած է գլխաւորապէս մայրաքա-  
ղաք Պեկինի եւ շրջակայ գաւառների արտասանութեան վրայ:  
Ինչպէս որեւէ այլ լեզուի պարագայում, մեր տառադարձութիւնը  
բաւարարուելու է այդ գրական լեզուի հնչիւններով (աւելին  
չենք էլ կարող անել):*

*Այստեղ բերում ենք Հնչիւնաբանութեան Միջազգային Ըն-  
կերութեան (IPA)<sup>8</sup> այբուբենի նուազ ծանօթ նշանագրերից մի  
քանիսը (որ ստորեւ մեզ պէտք են գալու) եւ դրանց հայերէն  
պայմանական համարժէքները: Հնչոյթի կամ հնչիւնի<sup>9</sup> նշանը ըն-*

8 International Phonetic Association, *Հնչիւնաբանութեան Միջազգային Ընկե-  
րութիւն*, որի հնչական նշանագրերով է ընդունուած գրի առնել զանա-  
զան լեզուների հնչոյթները: Միջազգայնօրէն ընդունուած է կա'մ ֆրան-  
սերէն (API), կա'մ անգլերէն (IPA) յապաւումը:  
9 «Հնչոյթ» եւ «հնչիւն» եզրոյթների տարբերութիւնը քաջ յայտնի է լե-  
զուաբանութեանը: Տե՛ս ՊԵՏՐՈՍԵԱՆ, Հ. Զ. - ԳԱԼՍԵԱՆ, Ս. Ա. - ՂԱ-  
ՐԱԳԻԻԼԵԱՆ, Թ. Ա., *Լեզուաբանական քառարան*, Հայկական ՍՍՀ Գի-  
տութիւնների Ակադեմիայի հրտ., Երևան 1975:

դուռնուած է դնել անկիւնաւոր փակագծերի մէջ, իսկ տառ արտայայտելու համար նշանագիրը դնում ենք չակերտների մէջ՝ «ա», «բ», «գ» եւ այլն:

IPA [w] հնչոյթ արտայայտելու համար պայմանականօրէն նշում ենք հայերէն [ւ] (հիւն տառը, դրա հին արտասանութեամբ): IPA [y]ի համար՝ [իւ] (ինչպէս արեւմտահայերէն մի քանի բառերի մէջ՝ միւս, նիւթ), IPA [v]ի (ինչպէս Ֆրանս. «huit» բառի մէջ) համար հայերէն պայմանականօրէն նշանակում ենք [յւ] (այս վերջինը բոլորովին խորթ է հայի ականջին. այն [իւ] ձայնաւորի համապատասխան կիսաձայնն է): IPA [x~z]ն հնչում է մօտաւորապէս հայերէն թոյլ [ծ] կամ [ր], IPA [x]ն՝ հայերէն [ը], IPA [i]ն՝ հայերէն [ը(ր)] ([ը]ից յետոյ լսում է անգլիական թոյլ [ր]), IPA [ŋ]ն՝ հայերէն [ն(գ)] (այն է՝ ռնգային [ն]. հայերէն «ն» տառի արտասանութիւնը «անգամ» բառի մէջ):

Բարբառներից կախուած՝ չինարէն հնչիւնների արտասանութիւնը բաւական տարբեր է նահանգէ նահանգ: Մեր տառադարձութիւնը անտեսելու է բարբառային այդ տարատեսակները:

## ԶԻՆԱՐԷՆԻՑ ՏԱՌԱԴԱՐՁԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՒ ՆՐՔՈՒԹԻՒՆՆԵՐ

Չինարէնն ունի 34 պարզ հնչոյթ (երկբարբառներն ու եռաբարբառները չհաշուած)՝ 8 ձայնաւոր, 3 կիսաձայն, 23 բաղաձայն: Հայերէնն ունի 36 պարզ հնչոյթ՝ 6 ձայնաւոր, 1 կիսաձայն, 29 բաղաձայն: Ստորեւ անդրադառնում ենք չինարէն տառադարձութեան գլխաւոր կանոններին ու նրբութիւններին:

### ա) Զինարէնի վանկերը

Չինարէնի վանկերն ունեն խիստ որոշակի կազմութիւն. բաղաձայնների ու ձայնաւորների ամէն մի համակցութիւն չի կարող գոյութիւն ունենալ չինարէնում (հայերէնի վանկերի տեսակները շատ աւելի շատ են):

Վանկի սիրտը՝ «կորիզը», մի որեւիցէ ձայնաւոր է (բնականաբար): Վանկը կարող է սկսել միայն մէկ բաղաձայնով, որին անուանում ենք<sup>10</sup> սկզբնահնչիւն բաղաձայն: Վանկը սակայն կա-

10 Քանի որ քննադիտութիւնը Հայաստանում տակաւին իր առաջին փայլերն է առնում, հայերէնը չունի չինարէնի ֆերկանութեան հաստատ-

րող է եւ միայն ձայնաւորով սկսել, այսինքն չունենալ սկզբնահնչիւն բաղաձայն: Վերջից վանկը կարող է փակուել երկու կիսաձայններից կամ երկու բաղաձայններից որեւիցէ մէկով (միայն մէկով): Վերջնահնչիւն կիսաձայններն են [j] եւ [ւ] (IPA [w]), իսկ բաղաձայններն են՝ [ն] եւ [ն(գ)] (ռնգային [ն], IPA [ŋ]):

Սկզբնահնչիւն բաղաձայնից յետոյ, անմիջապէս ձայնաւորից առաջ, կարող է լինել մի միջնահնչիւն, այն է՝ երեք կիսաձայններից մէկը՝ [j] (IPA [j]), [ւ] (IPA [w]), [յւ] (IPA [ɥ]):

Վանկն ուրեմն կարող է ունենալ այսպիսի տեսք. ZUAN, որտեղ «Z»ն [ծ] սկզբնահնչիւն բաղաձայնն է, «U»ն՝ [ւ] միջնահնչիւն կիսաձայնը, «A»ն՝ [ա] կորիզ ձայնաւորը, եւ «N»ն՝ [ն] վերջնահնչիւն բաղաձայնը:

Վանկի մէջ միակ պարտադիրը կորիզ ձայնաւորն է<sup>11</sup>: Վանկեր կան, որ ունեն սկզբնահնչիւն (բաղաձայն), վանկեր կան որ ունեն վերջնահնչիւն կամ միջնահնչիւն: Միջնահնչիւնը, կորիզ ձայնաւորը եւ վերջնահնչիւնը միասին կոչում են յանգ (վանկայանգ): Այսինքն, այլ կերպ ասած՝ վանկը բաղկացած է սկզբնահնչիւն բաղաձայնից եւ վանկայանգից (կամ եթէ սկզբնահնչիւն բաղաձայն չկայ, միայն վանկայանգից)<sup>12</sup>:

Հակառակ «սպասուածի», ամէն բաղաձայն չի կարող ամէն տեսակի յանգ ունենալ (կայ օրինակ՝ ZUAN, TUAN, բայց չկայ PUAN, FUAN): Բոլոր հնարաւոր համակցութիւնները միասին տալիս են 420ի չափ զանազան տեսակի վանկեր (այնինչ՝ եթէ բոլոր համակցութիւնները հնարաւոր լինէին, կը լինէր մօտ 800 վանկ): Ասել է թէ՛ տեսականօրէն հնարաւոր վանկերի կէսը գոյութիւն չունի չինարէնում:

## բ) Զինարէնի պարզ ձայնաւորները

Զինարէնի պարզ ձայնաւոր տառ-հնչիւններն են. «a» հայերէն հնչում է [ա], «e» տեղ-տեղ հայերէն՝ [ը], տեղ-տեղ՝ [ե] (այ-

---

տուած եզրոյթներ, եւ մեմֆ, որոշակի պայմանականութեամբ, երեւոյթներն աճուանում ենք այնպէս, որ հասկացութիւնները հայ մասնագէտին դիրամատչելի լինեն:

11 Խօսքը *փինիմ* գրութեան մասին է: Ճուրի՞ն այլ սկզբում կարող է ունենալ:

12 Լեզուարանական մի այլ՝ մօտեցմամբ՝ միջնահնչիւնը սկզբնահնչիւն բաղաձայնի «որակաւորման» (նրան որոշակի որակ տալու) բաղադրիչն է երեւ հնարաւոր տեսքերով. Բմայնացում ([j]), շրթնայնացում ([ւ]) կամ երկուսը միանգամից ([յւ]):

սինքն՝ փաստորէն մի տառով երկու հնչիւն են արտայայտում), «i» առաւելապէս՝ [ի], որոշ տառերից յետոյ՝ [ը] կամ [ըր], «o» հայերէն [ո], «u» հայերէն [ու], եւ «ü» արեւմտահայերէնի [ու]ն (ինչպէս «միւս, միւթ» բառերի մէջ, IPA [y]):

Հայերէնին անախորժ է բառամիջում եւ բառավերջին գրել «ը» տառը: Ուստի՝ չինարէնի «e»ն յարմարագրութեան համար ամէնուր տառադարձելու ենք «ե», իսկ «i»ն՝ «ի»: Այս տառադարձութիւնը նորութիւն չէ. փիւնիցը եւ կիւրեղեանը հայերէնին արդէն մղել են դէպի այդ լուծումը:

Չինարէնի ուղղագրութիւնը «ü»ն փափուկ բաղաձայններից յետոյ գրում է պարզ «u» (տե՛ս ստորեւ)՝ «ju, qu, xu» (քանզի այդ բաղաձայններին [ու] հնչիւն չի կարող հետեւել), եւ միայն «nü, lü»ի դէպքում է դնում երկկէտը<sup>13</sup> (տե՛ս ստորեւ): Միւս բաղաձայններին «ü» չի հետեւում:

Ինչպէս նշել ենք նախորդ (թուրքերէնին, ֆրանսերէնին ու գերմաներէնին նուիրուած) յօդուածներում, ընդհանուր գրական հայերէնը չունի IPA [y] ձայնաւորը: Արեւմտահայերէնի՝ մի քանի բառերում (միւս, նիւթ...) առկայ [ու] ձայնաւորի այդ արժէքը մասնաւոր երեւոյթ է ընդհանուր հայերէնի մէջ, եւ այն չի կարող կանոնաւորապէս հանդէս գալ իբրեւ օտար IPA [y]ի համարժէք: Մենք գտնում ենք, որ հայերէնը օտար երկու ձայնաւորներն էլ (IPA [u] եւ [y]) պէտք է տառադարձի մեր «ու» տառով (եւ ձայնով):

Վանկայանգերի մասին կը խօսենք ստորեւ:

Պարզ ձայնաւորների օրինակներ. A Ge Ա Կէ (թէեւ հնչում է [կը]), Anqing Անչին, Anshun Անշուն, Enping Ենփին (թէեւ հնչում է [ընփին(գ)], Enshi Ենշի (թէեւ հնչում է [ընշը(ը)], – նոյն տրամաբանութեամբ եւ յաջորդները), Ezhou Ենչու, Feng Ֆեն, He Ping Հէ Փին, Li Bai Լի Բայ, Shi Շի, Sima Սիմա, Botou Պոթու, Foshan Ֆոշան, Mozi Մոժի, Putian Փուփիան, Zuzhou Շուճու, Zhu Չու, Lüliang Լուլիան (հնարաւոր է նաեւ Լիլիան), Ju Lian Չու Լիան, Qu Bo Չու Պո, Lu Xun Լու Շուն (հնարաւոր է նաեւ Լու Շիւն):

13 «Ü» տառը համակարգիչների ստեղծագործարի վրայ բացակայելու դէպքում, մարդիկ յաճախ տպում են «V» տառը (որ այլապէս անգործածելի է չինարէնում, բայց կարող է լինել օտար, ինչպէս նաեւ ազգային փոքրամասնութիւնների լեզուներից մէջ քերած անուններում):

գ) Ձայնաւորների երանգները

Չինարէնը, ի տարբերութիւն հայերէնի (եւ հայերիս ծանօթ լեզուների մեծ մասի), ձայնաւորները արտասանում է զանազան ելեւէջներով, որ կոչում ենք երանգ: Գոյութիւն ունի հինգ երանգ, որոնք են.

ա) բարձր ու երկայն երանգ, հայերէն մօտաւորապէս [ա՛ա]՝ երգեցիկ շեշտով: Փիմիմով գրում են «ā» (վրան երկայնի նշան):

բ) բարձրացող երանգ, հայերէն մօտաւորապէս [ա<sup>o</sup>]՝ հարցական շեշտով: Փիմիմով գրում են «á» (վրան սուր շեշտի նշան):

գ) իջնող-բարձրացող, հայերէն մօտաւորապէս [աա<sup>o</sup>]՝ երկու [ա], երկրորդը՝ հարցական շեշտով: Փիմիմով գրում են «ǎ» (վրան սեպի նշան):

դ) իջնող երանգ, հայերէն մօտաւորապէս [ա՛]՝ հրամայական շեշտով: Փիմիմով գրում են «à» (վրան բութ շեշտի նշան):

ե) չէզոք երանգ, հայերէնի անշեշտ ձայնաւորների նման՝ [ա]: Փիմիմով գրում են «a» (առանց շեշտի):

Օրինակ՝ Չինաստանի մայրաքաղաքի անունը գրում է Běijīng: Հայերէն կը հնչի մօտաւորապէս [պեե՞յ-ճի՛իմ(գ)]: Միջազգային գրութիւնների մէջ սակայն զանց են առնում շեշտերը եւ անունը գրում Beijing: Հայի (եւ ոչ միայն հայի) ականջի համար խորթ է այդպիսի արտասանութիւնը, իսկ բերանի համար՝ գրեթէ անարտաբերելի: Ուստի մենք, ինչպէս եւ եւրոպական օտար միւս լեզուները, անտեսում ենք չինարէնի երանգները եւ անունները տառադարձում ենք, կարծես չինարէնը ոչ մի երանգ էլ չունենար: Այդպիսի տառադարձութիւնը, ինչ խօսք, կարող է թերութիւններ ծնել՝ երկու տարբեր անուններ նոյն կերպ արտայայտել: Օրինակ՝ Չինաստանի երկու (ի դէպ՝ իրար սահմանակից) նահանգ կրում են հետեւեալ անունները. Shānxī եւ Shǎnxī: Առաջինի առաջին վանկը հնչում է [ա՛ա], երկրորդինը՝ [աա<sup>o</sup>]: Լատինատառ՝ առաջին անունը ընդունուած է տառադարձել Shanxi, երկրորդը՝ Shaanxi: Այսպիսի դէպքերում հայերէնը նոյնպէս կարող է հետեւել լատինատառ տառադարձութեանը եւ մէկը գրել Շանչի, միւսը՝ Շաանչի: Նման զոյգերը հազուադէպ չեն:

Ինչպէս որ ամէն բաղաձայն չի կարող ամէն տեսակի յանգի միանալ ու վանկ կազմել, այնպէս էլ ամէն վանկ չի կարող ունենալ ամէն տեսակի երանգ: Հնարաւոր բոլոր վանկերանգները 1340ի չափ են, այնինչ եթէ բոլոր հնարաւոր վանկերը (420)

բազմապատկէիւնք հինգ երանգներով, կը ստանայինք 2100: Նշանակում է որ ամէն վանկ միջին հաշուով կազմում է երանգային միայն երեքից մի քիչ աւել (3,2) համակցութիւն: Կան օրինակ՝ tā [թա՛ա], tá [թա՞ա], tã [թաա՞], tã [թա՛], բայց չկայ ta [թա] (չէզոք երանգը): Կան tè [թը՛], tēi [թե՛ւյ], բայց չկան te-ի ու tei-ի միւս համակցութիւնները:

#### դ) Բառի շեշտը

Բառի շեշտը չինարէնում վատ է ուսումնասիրած. լեզուաբանները երբեմն իրարամերժ եւ անհասկանալի բացատրութիւններ են տալիս (կամ բողբոջովին լռում են): Դրա պատճառը մի կողմից երանգների առկայութիւնն է, որ խանգարում է բառի շեշտը յստակօրէն ընկալելու ու հասկանալու, միւս կողմից՝ ամէն մի վանկի յարաբերական ինքնուրոյնութիւնը: Չինարէն արմատները միավանկ են<sup>14</sup>, եւ նոյնիսկ բարդ բառ կազմելիս ամէն բաղադրիչ յաճախ պահում է իր շեշտը (ասել է թէ՛ բարդ բառի փոխարէն առկայ է յարադիր բառերի մի բարդութիւն՝ շարք): Ինչեւէ, երկվանկ եւ եռավանկ բառերի մէջ յաճախ նկատելի է առաջին վանկի շեշտադրութիւն: Սակայն դա պարտադիր չէ, եւ բառերի վերջին վանկերն էլ կարող են շեշտ կրել: Օրինակ՝ Beijing-ի շեշտը երկրորդ վանկին է:

Մեզ սակայն քիչ է յուզում բառային այդ շեշտը, քանզի, ինչպէս բազմիցս նշել ենք, օտար անունները՝ հայերէնով ենթարկւում են հայերէնի շեշտադրութեանը, եւ հայերէն տառերով գրած անունը հայերէն արտասանում ենք վերջավանկ շեշտով: Օտար անունների միակ ճիշտ շեշտադրութիւնը դա է: Պեկին անունը արտասանում ենք [պեկի՛ն], եւ բնաւ մեր հոգը չէ թէ չինացին այն ինչպէս է հնչեցնում: Վերջին հաշուով՝ մենք բոլորովին զանց ենք առնում չինարէնի երանգները (որոնք շատ աւելի կարեւոր նշանակութիւն ունեն). կարող ենք նոյն յաջողութեամբ անտեսել եւ շեշտերը:

#### ե) Չինարէնի սկզբնահնչիւն քաղաձայնները

Եթէ չինարէն վանկի կորիզը նրա ձայնաւորն է, ապա սկզբնահնչիւն բաղաձայնը կարող ենք նրա ողնաշարն անուանել: Վանկերի մեծագոյն մասը բաղաձայնով է սկսում:

14 Չինարէնի «գրաբարը» գրեթէ քացառապէս միավանկ լեզու էր:

**Չինարէնն ունի 21 «լիիրաւ» սկզբնահնչիւն բաղաձայն (կիսաձայն [յ]ն, [ւ]ն եւ [յւ]ն չհաշուած): Այստեղ խնդրում եմ ուշադրութիւն դարձնել մի կարեւոր կէտի վրայ: Պայթական եւ պայթաչփական բաղաձայնների շարքում արդի գրական չինարէնը չունի ձայնեղ բաղաձայններ [բ, դ, գ, ձ, ջ]<sup>15</sup>, այլ ունի միայն պարզ եւ շնչեղ խուլեր [պ, տ, կ, ծ, ց – փ, ք, ք, ց, չ]: Փիմից գրութիւնը ստեղծողները լատիներէն «p, t, k» տառերին տուել են [փ, ք, ք] հնչում, իսկ լատինական շնչեղներին («b, d, g» տառերին) վերագրել են պարզ խուլերի ձայնը՝ [պ, տ, կ]: ԺԹ. դարում ստեղծուած վեդ-Ջայլսի տառադարձութեան մօտեցումը սակայն այդպիսին չէր: Նրանք [պ, տ, կ]ն նշել են «p, t, k» տառերով, իսկ շնչեղները՝ [փ, ք, ք]՝ «p', t', k'» (շրջուած ապաթարցով): Միւս կողմից՝ Պաղադիոսի կիւրեղագիր տառադարձութիւնը կիրարկել է (դեռ փիմիցից առաջ) նոյն «թերի» տրամաբանութիւնը. պարզերը նշել է «б, д, г» իսկ շնչեղները՝ «п, т, к»: Յարմարագրութեան տեսակէտից նայած՝ նրանց մօտեցումը հասկանալի է. ինչ-որ կերպ պէտք էր օգտագործել լատինական ու սլաւոնական տառերի առկայ շտեմարանը:**

**ժամանակն է որ հայերէնը ձերբազատուի հայերէնի համար այդ սխալ տառադարձութիւններից: Մենք ունենք ե՛ւ պարզ, ե՛ւ շնչեղ խուլեր, այնպէս որ հարցը մեզ համար միանգամայն հասարակ է: Ստորեւ բերում ենք ձեռագիտութեան մէջ ներկայացուող մի աղիւսակ (գիտական առումով ամենաճիշտը չէ, սակայն գործնական տեսանկիւնից յարմար), որն ամփոփում է չինարէնի բաղաձայնները (կիսաձայնների մասին յետոյ):**

|                |                          |       |                |         |
|----------------|--------------------------|-------|----------------|---------|
| պարզ խուլ      | շնչեղ խուլ <sup>16</sup> |       |                |         |
| b – պ          | p – փ                    | m – մ | f – ֆ          |         |
| d – տ          | t – ք                    | n – ն | l – լ          |         |
| g – կ          | k – ք                    |       | h – հ/խ        |         |
| z – ծ          | c – ց                    |       | s – ս          |         |
| zh – ց (կոշտ)  | ch – չ (կոշտ)            |       | sh – շ (կոշտ)  | r – ժ/ր |
| j – ց (փափուկ) | q – չ (փափուկ)           |       | x – շ (փափուկ) |         |

15 Ջայնեղ բաղաձայններ սակայն առկայ են միջին չինարէնում եւ չինարէնի արդի որոշ բարբառներում:

*Ինչպէս երեւում է, դրանց մի զգալի մասի տառադարձութիւնը հայերէնի համար յստակ է (միւսների մասին տե՛ս ստորեւ): Ահա օրինակներ (միւս բաղաձայններով օրինակները ստորեւ). Bai Lu Պայ Լու, Ban Gu Պան Կու, Bengbu Պենպու, Pan Փան, Pengzhou Փեննով, Pingdu Փինսու, Pudong Փուսոն, Ma Kai Մա Քայ, Mengzi Մենծի, Mi Fu Մի Ֆու, Fan Chung Ֆան Չու, Feng Menglong Ֆեն Մենլոն, Fujian Ֆուսիան, Dalian Տալիան (արեւելահայ աւանդական գրութիւնը Դալիան է), Deng Lun Տեն Լուն, Ding Ling Տին Լին, Taishan Թայշան, Tan Zheng Թան Ճեն, Tian Han Թիան Հան, Tumen Թումեն, Nanchang Նանչան, Nenjiang Նենցիան, Ni Tian Նի Թիան, Laibin Լայպին, Lechang Լեչան, Li Da Լի Տա, Long Լոն, Lu Լու, Lushan Լուշան, Gansu Կանսու, Ge Hong Կե Հոն, Gong Kai Կոն Քայ, Guan Tong Կուան Թոն, Kaifeng Քայֆեն, Ke Yan Քե ԅան, Kunming Քունմին:*

զ) Միշտ կոշտ (թաւ) բաղաձայններ («ծ, ց, ս»)

*Այս երեք բաղաձայնների շարքը միշտ կոշտ հնչում ունի, եւ առաջնալեզուային [ի] ձայնաւորը դրանց չի կարող հետեւել: Դրանցից յետոյ «i» ձայնաւոր տառը հնչում է [ը]: Այսպիսով՝ «zi, ci, si» հնչում են [ծը, ցը, սը]: Հայերէնը բնականաբար չի կարող այդպէս գրել (բառամիջում «ը»), եւ մենք տառադարձում ենք «ի» տառով՝ «ծի, ցի, սի» (ռուսերէն գրում են՝ «цзы, цы, сы»):*

*Օրինակներ. Zaifu Ծայֆու, Zeng Gong Ծեն Կոն, Zigong Ծիկոն, Cai Chongda Ցայ Չոնտա, Cixi Ցիշի, Sanming Սանմին, Sunzi Սունծի, Sichuan Սիչուան: Նկատեցէք որ չենք գրում Սչուան, թէեւ հայերէնի ուղղագրութիւնը ա՛յս դէպքում դա լիովին թոյլ է տալիս: Եթէ գրէինք, կը ստեղծէինք բացառութիւններ եւ տառադարձութեան մէջ խառնաշփոթ կը մտցնէինք:*

է) Կոշտ (թաւ) եւ փափուկ բաղաձայնների գոյգ շարքերը («ն-չ-շ» եւ «ն՛-չ՛-շ՛»)

*Վերի աղիւսակի վերջին երկու շարք զոյգերը իրարից տարբերում են կոշտութեամբ ու փափկութեամբ: «Zh-ch-sh» կոշտ են, «j-q-x»՝ փափուկ: Կոշտերը հայերէն [ն-չ-շ]ից աւելի կոշտ են, իսկ փափուկները՝ շատ փափուկ, այնքան փափուկ, որ դրանք կարելի է նաեւ համարել [ծ-ց-ս]ի փափուկ շարք: Ճենագիտութեան մէջ վերջնական կարծիք չկայ փափուկ այս շարքի հնչիւնաբանութեան վերաբերեալ: դրանք համարում են ե՛ւ [ն-չ-շ]ի*

փափուկներ, ե՛լ [ծ-ց-ս]ի, ե՛լ նոյնիսկ (ստուգաբանորէն) [կ-բ-հ]ի: Այս վերջին մօտեցումն է որ ստիպել է [պէյճին]ը (Beijing) Ժամանակին գրել Pekin(g) կամ Пекин, որոնցից էլ մենք ունենք Պեկին:

Այսու ամենայնիւ, քանի որ լեզուաբանների մեծ մասը հակուած է «յ-զ-ք»ն համարել «zh-ch-sh»ի գուգահեռը, մենք որդեգրում ենք ա՛յդ լուծումը, այն է՝ հայերէն գրել «ե-չ-շ» (եւ ոչ թէ «ծ-ց-ս», առաւել եւս «կ-բ-հ»): Վեդ-Ջայսի գրադարձութիւնը «zh-j» եւ «ch-q» զոյգերը համարում է միեւնոյն հնչոյթների ենթահնչիւններ եւ գրում է համապատասխանաբար «ch» եւ «ch՛» (հնչիւնների տարբերակումը գալիս է յաջորդող ձայնաւորների շնորհիւ), քանի որ բաղաձայն այդ զոյգերը հանդէս են գալիս իրար լրացնող դիրքերում: Յառ Զիլիուի հեղինակած եւ Հայաստանում տպագրած Չինարէն դասագիրքը որդեգրել է «ծ-ց-ս» շարքը, հետեւելով հաւանաբար գոյութիւն ունեցող սովետահայ «աւանդութեանը» (ուուսերէնից)<sup>16</sup>: Վերջին խօսքը հայ ապագայ ձեւագէտներինն է:

Յիշեալ կոշտերից յետոյ «i» ձայնաւորը հնչում է, ինչպէս եւ նախորդ կոշտերից յետոյ, [ը], կամ [ըր]՝ [ը]ից յետոյ շատ թոյլ մի [ր] է լսում (անգլերէն [r]ի նման): Փափուկներից յետոյ գրում են միայն առաջնային շարքի ձայնաւորներ՝ «i» եւ «ü» (կամ դրանց համապատասխան կիսաձայնները): Երկու շարքերն էլ «i»ով տառադարձում ենք միատեսակ՝ «եի, չի, շի»: Նրանք նոյնանում միայն մաքուր «i» ձայնաւոր յանգի դէպքում: միւս յանգերի մէջ կոշտերը չունեն փափուկներից յետոյ եկող «i» կամ «ü» (միջնա)տառերը:

Փափուկներին միշտ յաջորդում են «i» կամ «ü» առաջնայեզուային ձայնաւորները («յ-զ-ք»ից յետոյ «ü»ն գրում է առանց երկկէտի՝ «u»): Այս երեք փափուկներից բացի միայն «l» եւ «n» բաղաձայններին կարող է յաջորդել «ü» տառը (եւ միայն դրանցից յետոյ են իսկապէս գրում երկկէտով՝ «ü», քանի որ գոյութիւն ունեն նաեւ «lu», «nu» համակցութիւններ):

Օրինակներ. Zhai Zhigang ձայ ձիկան, Zhenjiang ձեմեիան, Zhijiang ձիճիան, Zhongli ձոնլի, Zhu Dunfa ձու Տուճֆա, Chang Shuhong Չան Շուհոն, Chen Chun Չեմ Չուեմ, Chibi Չիպի, Chu Anping Չու Անփին, Shanghai Շանհայ, Shehong Շեհոն, Shi Shen Շի Շեմ, Shulan Շուլան – Ji Sheng ձի Շեմ, Jiang ձիան, Jilin ձիլին

16 ՅԱՌ ԶԻԼԻՈՒ - ՅՈՎՍԷՓԵԱՆ, Մ., *Զինարէն*, նշ. աշխ., 16:

(աւանդաբար Կիրիմ), Ju Lian ձու Լիան, Qi Baishi Չի Պայշի, Qianshan Չիանշան, Qu Bo Չու Պո, Qujing Չուֆին, Xi Jinping Շի Ճիմփին (դիւանագիտական արեւելահայերէնը այսօր գրում է Սի Միմփին), Xiangxiang Շիանշիան, Xiong Ziqi Շիոն Միչի, Xu Dishan Շու Տիշան, Xuancheng Շուանչեն:

ը) Վիմայարոյց բաղաձայններ («h/խ», «ժ/ր»)

Երկու բաղաձայն կարող են վիճայարոյց լինել հայ տառադարձութեան համար: Դրանց արտասանութիւնը տատանում է, եւ զանազան (բարբառակիր) անձինք դրանք այս կամ այն կերպ են արտասանում:

«H» տառի կենդանի արտասանութիւնը ձայնաւորներից առաջ աւելի յաճախ հետեւեալն է՝ [hա, խը, հեյ, խ(ու)ո, խու/հու] («h»ից յետոյ «i» չի լինում): Այսինքն՝ ետնալեզուային ձայնաւորներից առաջ աւելի շուտ [խ] է լսւում, իսկ առաջնալեզուային ձայնաւորների շրջապատում՝ [h]:

Հայ տառադարձութիւնը (ե՛լ արեւելահայերէն, ե՛լ արեւմտահայերէն) հարցը լուծել է «h»ի օգտին, եւ մենք էլ այսօր համարում ենք, որ այդպէս աւելի յարմար է, այն է՝ փիմիմի լատինական «h» տառը ամէնուրեք գրենք հայերէն «h» (այլապէս պէտք է սահմանէինք թէ որ ձայնաւորից առաջ որ տառով պէտք էր տառադարձել):

Փիմիմի «R» տառի կենդանի հնչումը նոյնպէս երկդիմի է, կարող է դիտուել իբրեւ հայերէն [r] կամ շատ թոյլ [ժ]: Ճենագիտական աղիւսակներում այն աւելի յաճախ «շ»ի կողքին դնելը մեզ յուշում է, որ գերադասելի կը լինէր այն տառադարձել «ժ»: Աւելին՝ միջնադարից եկող արաբագիր չինարէնը<sup>17</sup> դրա համար դրել է արաբապարսկական այբուբենի «ج» [ժ] տառը<sup>18</sup>: Վեղ-Ջայլը գրում է «j» (Փրանսերէն հնչմամբ) եւ կիրեղագիր տառադարձութիւնը նոյնպէս որդեգրել է սլաւոնական «ж» տառը: Եթէ տառադարձէինք «ր», ստիպուած էինք լինելու բառասկզբին փոխարէնը գրել «ռ», մի բան որ շատ հեռացնելու էր հա-

17 Մինչև այժմ էլ գործածութեան մէջ է չիմացի մահմետականների շրջանում:

18 Завьялова, О. И., *Большой мир китайского языка*, «Восточная книга», Москва 2014<sup>2</sup>, 258.

յերէնը չինարէն հնչումից: Ուստի՝ իբրեւ սկզբնահնչիւն բաղաձայն՝ «R»-ն գրում ենք «Ժ»<sup>19</sup>:

«R»-ն միշտ կոշտ է, եւ «ri»-ն հնչում է, ինչպէս եւ վերոնշեալ կոշտերի դէպքում, [ժը(ր)] (վերջին բաղադրիչի կենդանի արտասանութիւնը նման է անգլերէնի [r] հնչիւնին): Մենք սակայն դա տառադարձելու ենք «Ժի», համաձայն վերը կատարած ընտրութեան:

Այստեղ պէտք է առանձնացնենք մի այլ դէպք: «R»-ն հանդիպում է ոչ միայն իբրեւ սկզբնահնչիւն, այլեւ յանգի վերջնահնչիւն, եւ դրա տառադարձութիւնը տարբեր է լինելու (տե՛ս ստորեւ):

**Օրինակներ.** Haidong Հայտոն, Hainan Հայնան, He Ping Հէ Փիմ, Hebei Հեպէ, Helong Հելոն, Heze Հեժէ, Hong Ren Հոն Ժեմ, Hubei Հուպէ, Hunan Հունան, Rangsi Ժանսի, Ren Ժեմ, Renhuai Ժեմ-հուայ, Rizhao Ժիհաւ, Rushan Ժուշան:

բ) [o] ձայնաւորը շրթնային բաղաձայններից յետոյ («b, p, m, f»)

**Չինարէնի «O» տառը բաղաձայններից յետոյ մշտապէս հնչում է [լ] կիսաձայն նախայաւելուածով (միջնահնչիւնով)՝ [լո], եւ այդպէս էլ գրւում է՝ «uo».** «duo, tuo, nuo, luo, guo, kuo, huo, zuo, cuo, suo, zhuo, chuo, shuo, ruo»: Բացառութիւն են «bo, po, mo, fo» համակցութիւնները (որոնք նոյնպէս հնչում են [puo, p<sup>h</sup>uo, muo, fuo]): Սա փիմի նուղազգրութեան «Թերութիւններից» մէկն է. «անհասկանալի» է թէ ինչու են հեղինակները այլ մօտեցում ցուցաբերել շրթնայինների նկատմամբ:

Նոյն կերպ է հնչում արդի գրական ռուսերէնը. «more, более, поле, рот, дом, кот» բառերում [o]ից առաջ կիսաձայն մի [լ] է հնչում: Պաղաղիոսի տառադարձութիւնը չինարէնի բոլոր այս կապակցութիւնները գրում է պարզ «O»ով՝ «bo, po, mo, fo, do, to, ho, lo, fo, ko...»:

Մենք հակուած ենք հետեւելու կիւրեղեան տառադարձութեան (որին եւ ընդօրինակել է սովետահայերէնը) եւ ամէնուր գրելու «ո». «ոլո» գրութիւնը ծանր կը լինէր աչքի համար եւ

19 Հեռաւորաբեւելեան երկրներում յայտնի «փաստ» է, որ չինարէնը չունի [ր] հնչիւն, իսկ ճապոնեերէնը՝ [լ]: Փոխառութիւնների մէջ դրանք համարում են մէկը միւսին փոխարինող տառեր:

անհիմաստ, քանի որ բնաւ չկան «n» եւ «nɔn» գուգահեռ ձեւեր<sup>20</sup>:  
Ի դէպ՝ չինարէնն ինքն է օտար [o]երը տառադարձում «uo»:

**Օրինակներ.** «o»ով՝ Bole Պոլէ, Qu Bo Չու Պո, Ningpo Նինփո, Mo Yan Մո Յան, Mozi Մոժի, Foshan Ֆոշան, – «uo»ով՝ Wang Duo Վան Տո, Wen Yiduo Վեն Իտո, Tuoba Թոպա, Luo Fuhe Լո Ֆուհէ, Luoding Լոտին, Shangluo Շանլո, Anguo Անկո, Guo Chun Կո Չուն, Zhang Guoli Չան Կոլի, Shen Kuo Շեն Քո, Huozhou Հոֆու, Wallace Huo Վալաս Հո (անձնանունը եւրոպական է), Chongzuo Չոնցո, Li Zuocheng Լի Մոչեն, Hezuo Հեծո, Zhuozhou Չոֆու, zhuō «ո» (նշանակում է «սեղան»), Shuozhou Շոֆու, Wang Shuo Վան Շո, Wu Changshuo Ու Չանչո, Guo Moruo Կո Մոժո, Wang Ruowang Վան ժովան, Zhang Ruoyun Չան ժոյուն: «Nuο»ով, «cuο»ով, «suο»ով եւ «chuo»ով յատուկ անունների օրինակներ չգտանք. cuō «ցո» (նշանակում է «սխալ»), suō «սո» (նշանակում է «չէնք»):

ժ) «ie»ի արտայայտումը «ե»ով

Նախորդ կէտի տրամաբանութեամբ՝ առաջարկում ենք «ie» գրութիւնը եւս տառադարձել պարզ «ե»ով (ամէն անգամ «իե» գրելուց խուսափելու համար). թէեւ կենդանի արտասանութիւնը աւելի շուտ [յե] է: Պաղաղիոսի ռուսերէն տառադարձութիւնը դրանք գրում է սլաւոնական «e» տառով (իսկ փիլիմի «e»ն ([ը] արտասանութեամբ) գրում է «э»): Այսպիսով, քանի որ երկուսն էլ առաջարկում ենք դարձնել «ե», նոյնանում են «me / mie», «de / die», «te / tie», «ne / nie», «le / lie» զոյգերը, եւ «zhe / jie», «che / qie», «she / xie» կոչո ու փափուկ զոյգերը: Միւս բաղաձայնները չունեն այս հակադրութիւնը. յանգը կա՛մ «e» վերջաւորութեամբ է, կա՛մ «ie»: Որոշումը ձեռնագէտներին է. արժէ խորհել:

**Օրինակներ.** Li Tiefu Լի Թեֆու, Liang Guanglie Լիան Կուանլէ, Nie Haisheng Նե Հայշեն, Tieli Թելի, Bijie Պիե(ի)է, Gu Jiegang Կու Չ(ի)եկան, Liu Xie Լիու Շ(ի)է, Xie Fuzhi Շ(ի)է Ֆուֆի:

ժա) վանկայանգ երկրարքառները

Վանկի յանգը աւարտող երկբարբառները [յ] կամ [լ] կիսաձայնով են վերջանում: Ահա դրանց տառադարձութիւնը.

20 Միայն մի բառ կայ «lo» ձեւով, որ գուգահեռ է «luo» վանկին:

|                 |      |      |      |      |
|-----------------|------|------|------|------|
| փիմից գրութիւնը | ai   | ei   | ao   | ou   |
| IPA հնչումը     | [ai] | [ei] | [au] | [ou] |
| տառադարձութիւն  | այ   | է    | աւ   | ով   |

Ընթերցողին յիշեցնենք, որ մենք աշխատում ենք յարգել հայերէնի հնչիւնակարգը: Ինչպէս նշել ենք նախորդ յօդուածներին ներածական բաժիններում, հայերէնը չունի «էյ» երկբարբառ եւ օտար «ei/ej/ey»-երը վերածում է «է»ի: «Ao» երկբարբառի դէպքում չինարէն ուղղագրութիւնն է «վատը»: այստեղ երկրորդ բաղադրիչը կիսաձայն [ւ] է, ուստի հայերէն ճիշտ կը լինի տառադարձել մեր «աւ» երկբարբառով, որպէս եւ անում ենք հին յունարէնի ու լատիներէնի պարագայում, եւ որպէս առաջարկել ենք անգլերէնի ու գերմաներէնի համար<sup>21</sup>: «Ou» երկբարբառի ամենամօտ (եւ գիտական) ձեւը հայերէն «ով» գրութիւնն է:

Մէկ անգամ եւս նշենք, որ հայերէնին խորթ են «առ», «առւ», «ռռ» եւ նման ձեւերը, որոնք ոչ մի յաւելեալ արժէք չեն ներկայացնում եւ միայն բարդացնում ու աղաւաղում են հայերէն ե՛լ հնչումը, ե՛լ գրութիւնը:

**Օրինակներ.** Baili Պայլի, Cai Han Յայ Հան, Haikou Հայֆով, Li Zai Լի Շայ, Beijing Պեկին (Պեկին), Chen Peiqiu Չեն Փեչիու, Feicheng Ֆեչեն, Hubei Հուպեյ, Heilongjiang Հեյլոնցիան, Taipei Թայփեյ, Weinan ՎեՆան, Cao Cao Յաւ Յաւ, Deng Xiaoping Տեն Շիաւփից, Hu Zao Հու Շաւ, Mao Zedong Մաւ Մետոն, Zhao Wei Չաւ Վեյ, Bozhou Պոնով, Fuzhou Ֆուֆով, Houma Հովմա, Laohekou Լաւեֆով, Meizhou Մեֆով, Zhoukou Չովֆով:

Ժբ) Վանկայանգ ուգայիցները

Վանկի յանգը փակող ունգային կոչուած բաղաձայնները կա՛մ մաքուր [ն] են, կա՛մ ունգային [ն(գ)]՝ IPA [ŋ]<sup>22</sup>: Փիմիցը գրում է «ո» եւ «ոց», ռուսերէնը որդեգրել է «нб / н» հակադրութիւնը<sup>23</sup>: Հնարաւոր վանկայանգերն են.

21 Տե՛ս համապատասխան յօդուածները:

22 Սրանցից բացի միայն մէկ այլ բաղաձայն կարող է աւարտել յանգը (տե՛ս ստորեւ):

23 Այո, սխալ չենք գրել. լատինատառ «ո»ի դիմաց գրում է «нб», իսկ «ոց»ի դիմաց՝ «н»:

|                  |          |          |          |               |         |
|------------------|----------|----------|----------|---------------|---------|
| մաֆուր [ն]ով     | an [an]  | en [ən]  | in [in]  | –             | ün [yn] |
| ոնգալիմ [ն(գ)ով] | ang [aŋ] | eng [əŋ] | ing [iŋ] | ong [oŋ / uŋ] | –       |
| տառադարձութիւն   | ան       | են       | ին       | ոն            | ուն     |

Ձոյգերն այսպիսով հայերէն տառադարձութեան մէջ չենք տարբերակում: Այդ չտարբերակելը արդէն առկայ է սովետահայերէն գրութեան մէջ (Shanghai Շանհայ, եւ ոչ թէ Շանգհայ), եւ մենք էլ չենք խրախուսում «գ»ով գրելու տարբերակը<sup>24</sup>: «նգ» գրելը արուեստականօրէն կը հեռացնէր մեր տառադարձութիւնը եւ կենդանի հնչումից, եւ գիտական ստուգաբանութիւնից: Համեմատութեան համար՝ արդէ բուլղարերէնը, որ չունի ուղղակի չի նարէնի մաքուր եւ ոնգալիմ «ն»երը (երկուսն էլ գրում է «н»):

«En»ը «ըն»ի փոխարէն բնականաբար գրում ենք «են»: «Ong»ը նախընտրում ենք գրել «ոն», եւ ոչ թէ «ուն». կենդանի արտասանութիւնը տատանում է երկուսի միջեւ (կիւրեղեանը տառադարձում է «ун»): «Ün»ը, համաձայն «իւ»ից խուսափելու մեր որդեգրած կողմնորոշման, դառնում է «ուն»:

Օրինակներ. Ankang Անգան, Anqing Անչին, Han Հան, Changchun Չանչուն, Wan Վան, Wang Վան, Zhang Չան, Yan Յան, Yang Յան, Fang Ֆան, Tang Թան, Chen Չեն, Wen Վեն, Zheng Չեն, Deng Տեն, Peng Փեն, Shen Շեն, Sheng Շեն, Meng Մեն, Lin Լին, Jin Ճին, Qin Չին, Ding Տին, Song Սոն, Dong Տոն, Zhong Չոն, Kong Քոն:

Յիշեցնենք, որ «j-q-x»ից յետոյ «ü»ն գրում է առանց երկկէտի՝ «ս». Bojun Պոնուն (այլապէս՝ Պոնին), Junchen Չունչեն (այլապէս՝ Չիւնչեն), Zuxun Մուշուն (այլապէս՝ Մուշին), Xunzi Մունծի (այլապէս՝ Միւնծի):

Պէտք է նկատել, որ փինինի «un» յանգը երկակի հնչում ունի. «j-q-x»ից յետոյ արտասանում է [-իւն], իսկ միւս բաղաձայններից յետոյ՝ [-ըն] (սրա մասին տե՛ս ստորեւ): Երկուսն էլ տառադարձում ենք նոյն կերպ (օր.՝ Dunhuang Տունհուան):

Ժգ) Միջնահնչիւն [յ], [ւ], [յւ] կիսաձայնները եւ դրանցով կազմած երկարաբառները

Հետեւեալ աղիւսակը տալիս է միջնահնչիւն կիսաձայններով կազմուած բոլոր հնարաւոր յանգերը եւ դրանց՝ մեր որդե-

24 Այս մասին ակնարկել ենք անգլերէնին նուիրուած յօդուածում:

գրած հայերէն տառադարձութիւնը: Այստեղ չենք ներառել «ie»ով եւ «uo»ով ձեւերը, որոնց մասին խօսեցինք վերը եւ որոնց տառադարձութեան համար նախընտրեցինք պարզ հնչիւններ («ե» եւ «ո»):

|     | -a  | -e  | -ai  | -ei   | -ao | -ou   | -an  | -en   | -ang  | -ong |
|-----|-----|-----|------|-------|-----|-------|------|-------|-------|------|
| i-  | ia  |     |      |       | iao | i[o]u | ian  |       | iang  | iong |
| ի-  | իա  |     |      |       | իաւ | իու   | իան  |       | իանց  | իոց  |
| u-  | ua  |     | uai  | u[e]i |     |       | uan  | u[e]n | uang  |      |
| ու- | ուա |     | ուայ | ուի   |     |       | ուան | ունց  | ուանց |      |
| ü-  |     | üe  |      |       |     |       | üan  |       |       |      |
| ու- |     | ուե |      |       |     |       | ուան |       |       |      |

Անկիւնաւոր փակագծերի մէջ բերել ենք հնչող բայց չգրուող ձայնաւորները (երեք դէպք՝ տե՛ս յաջորդ կէտը):

Մի քանի դիտողութիւն. «ian» յանգը աւելի շուտ հնչում է [jen], սակայն «իեմ» գրելու փոխարէն գրում ենք «իան» (բառասկզբին եւս՝ «yan» գրութիւնը տառադարձելու ենք «յան» (տե՛ս ստորեւ)): Արտասանութիւնը յստակ չէ. տարբեր անձինք տարբեր արտասանութիւն ունեն, որը տատանւում է [յան]ի եւ [յեմ]ի միջեւ: Գերադասում ենք գրելաձեւը: «iong» յանգի հնչումը տատանւում է IPA [jɔŋ]ի եւ [juŋ]ի միջեւ՝ նայած անձի: Նախընտրում ենք գրել «իոց»: «üan»ը տատանւում է IPA [ɥɛn]ի եւ [ɥan]ի միջեւ (նոյնպէս՝ նայած անձի): Տառադարձում ենք ըստ գրութեան՝ «ուան»: Փինինի ուղղագրութիւնը «յ, գ, ք»ից յետոյ գրում է «uan» (առանց երկկէտի):

Օրինակներ. Zhangjiagang ձանգիական, Beipiao Պեփիաւ, Chi Haotian Չի Հաւթիան, Gaobeidian Կաւպետիան, Tianjin Թիանցին, Zhang Wannian ձան վանգիան, Wei Liang Վէ Լիան, Du Qiong Տու Չիոն, Xiong Guangkai Շիոն Կուանգայ, Zeng Jiongzhi ձեմ ձիոցին, Huaibei Հուայպէ, Pei Huailiang Փէ Հուայլիան, Huairen Հուայթեմ, Guangdong Կուանտոն (այսօր՝ Կանտոն), Huang Ding Հուան Տին, Zaozhuang Շաւեուան, Cao Xueqin Ցաւ Շուեչին, Chen Xuedong Չեմ Շուետոն, Ru Zhijuan Ժու ձիւուան, Fuquan Ֆուչուան, Fu Quanyou Ֆու Չուանիոյ, Wu Quanxu Ու Չուանչու:

Ժդ) «-u[e]i», «-i[o]u» եւ «-u[e]n» յանգերի արտայայտումը  
 Փինինի մէկ այլ բացթողումներից է վանկայանգ «-uei» [ւեյ], «-iou» [յու] եւ «-uen» [ւըն] եռաբարբառների կիսատ՝ առանց

ձայնաւորի գրուածիւնը. «-ui», «-iu», «-un»: Բառակազմին սակայն գրուածիւնը լրիւ է. «wei», «you», «wen» (տե՛ս ստորեւ):

Հայերէն կարող ենք տառադարձել կա՛մ «-ուե», «-իու», «ուեան» (յարգելով կենդանի արտասանութիւնը եւ վերականգնելով չգրած ձայնաւորը), կա՛մ «-ուի», «-իու», «-ուե» (ըստ գրութեան): Հարցը ուղղուած է ճենագէտներին: Մենք առայժմ կարծում ենք, որ այս պարագայում լայն հասարակութեանը աւելի աչքն է յուշելու քան ականջը, եւ հակուած ենք տառադարձելու ըստ գրութեան՝ «-ուի», «-իու», «-ուե»:

Օրինակներ. «u(e)i»՝ Anhui Անհուի (այլապէս՝ Անհուէ), Cui Hao Յուի Հաւ (այլապէս՝ Յուէ), Li Jukui Լի Ճուֆուի (այլապէս՝ Ճուֆուէ), Zhan Ruoshui Չան ժոշուի (այլապէս՝ ժոշուէ) – «i(o)u»՝ Liu Boming Լիու Պոմին (այլապէս՝ Լիու), Pi Rixiu Փի Ժիշիու (այլապէս՝ Ժիշիու), Luqiu Լուչիու (այլապէս՝ Լուչիու) – «u(e)n»՝ Anshun Անշուն (այլապէս՝ Անշուեան), Changchun Չանչուն (այլապէս՝ Չանչուեան), Dunhuang Տունհուան (այլապէս՝ Տունհուան), Kunming Քունմին (այլապէս՝ Քունեմին), Shi Zhecun Շի Չեցուն (այլապէս՝ Չեցուեան), Wu Chun Ու Չուն (այլապէս՝ Չուեան):

Ժե) «yi, wu, yu»ի արտայայտումը վանկասկզբին

Փիւնինը տարբեր կերպ է արտայայտում կիսաձայները իբրեւ միջնահնչիւն («i, u, ü», ինչպէս տեսանք վերը) եւ իբրեւ սկզբնահնչիւն բաղաձայն. վերջիներս գրում է «y, w, yu»:

Օրինակ՝ վանկասկզբին «-ian»ը գրում է «yan», «-uan»ը՝ «wan»: «Ü»ով սկսող վանկերը գրում են «yu-». «üe»ն գրում է «yue» (հնչում է IPA [ɥe]), «ün»ը՝ «yun» (IPA [ɥn]), «üan»ը՝ «yuan» (IPA [ɥen]). այլ վանկեր չկան:

Նմանապէս ուղղագրական նկատառումներով, վանկասկզբի «i, u, ü» ձայնաւորներից առաջ աւելացնում են «y, w, y» տառերը, այսպէս՝ «yi, wu, yu» (վերջինը առանց երկկէտի): Արտասանութեան մէջ օրէնքով դրանք մաքուր ձայնաւորներ են, սակայն կան եւ կիսաձայներով արտասանող չինացիներ, այսինքն՝ «yi»ն արտասանում են [i] կամ [ji], «wu»ն՝ [u] կամ [wu], «yu»ն՝ [y] կամ [ɥy]: Մենք հետեւում ենք կանոնաւոր արտասանութեանը եւ «yi, wu, yu»ն տառադարձում «ի, ու, ու»:

«Yue» եւ «yuan» համակցութիւնները գրում ենք համապատասխանաբար «վե» եւ «յուան», սակայն համոզուած չենք որ լաւագոյն լուծումն ենք գտել:

*Օրինակներ.* Cheng Yi Չեն Ի, Chu Yimin Չու Իմին, Bai Juyi Պայ Ջուի, Pinyin (Pin-yin) փինին (հետեւաբար՝ սխալ է հանդիպող «փին-յին» ձեւը), Zhuyin (Zhu-yin) ճուին (նմանապէս՝ սխալ կը լինի «ճու-յին» ձեւը), Dongying Տոնին, Hong Ying Հոն Ին, – Fan Ye Ֆան Յէ, Ye Shengtao Յէ Շենթաւ, Cai Yan Յայ Յան, Shang Yang Շան Յան, Li Yaotang Լի Յաւթան, Dongyang Տոնիան, Liu Yong Լիու Յոն, Yongkang Յոնգան, – Wu Guanzhong Ու Կուանցոն, Wuhan Ուհան, Wuma Ումա, Wuzhishan Ունիշան, – Zhang Wo Չան Վո, Wafangdian Վաֆանտիան, Wuwei Ուվէ, Li Wei Լի Վէ, Wan Haifeng Վան Հայֆեն, Wang Chong Վան Չոն, Wen Tong Վեն Թոն, Weng Zhanqiu Վեն Չանչիու, – Cao Yu Յաւ Ու, Chen Yuqi Չեն Ուչի, Danyu (Dan-yu) Տանու, Lianyungang (Lian-yun-gang) Լիանունկան, Yunnan Յուննան, Zhang Ruoyun Չան Ժոյուն («յ»ն այստեղ հայերէնի պահանջն է), – Shen Yue Շեն Վէ, Shen Yueyue Շեն Վեւէ (անուան վերջնական տեսքը յղկուած է հայերէնի ուղղագրական կանոնների համաձայն), Chen Yuan Չեն Յուան, Changyuan Չանիուան (այստեղ հայերէնի ուղղագրութիւնը խոտելի է), Xuanyuan Շուանիուան (նմանապէս), Xu Yaoyuan Շու Յաուան (փորձեցինք սղել «ի»ն):

Ժգ) «ê» áայնաւորը

*Ինչպէս տեսանք վերը, փինինը լատիններէն «e» տառով արտայայտում է [ը] հնչիւնը (որ հայերէն տառադարձում ենք «ե»): Սակայն չինարէնն ունի նաեւ [է] հնչիւնը (օրինակ՝ «ei, ie» երկբարբառների մէջ), որ իր մաքուր տեսքով հանդիպում է միայն «ê» ձայնարկութեան մէջ («է'»):*

Ժե) Յանգավերջի [ը(ր)] հնչիւնը

*Ինչպէս տեսանք, յանգը փակող միակ բաղաձայններն են «N»ն եւ «NG»ն: Չինարէնն ունի սակայն նաեւ մի այլ բաղաձայն, որ կարող է կցուել յանգերի վերջին: Այն աւելի յաճախ քերականական մասնիկ է. գրւում է «er» կամ պարզապէս «r»: Հնչում է անգլերէն [r]ի նման երանգով՝ [ար], [արը], [ըր], [ը]' նայած խօսողի:*

*Այս բաղաձայնը, ի տարբերութիւն սկզբնահնչիւն «r»ի, տառադարձում ենք հայերէն «ր»: Ասել է թէ՛ եթէ «r» տառը ձայնաւորից յետոյ է գալիս, ուրեմն «ր» է եւ ոչ թէ «ժ»:*

*Գրական համընդհանուր չինարէնը (փութոնհուան) չի կարող ունենալ յանգը փակող որեւէ այլ բաղաձայն: Եթէ մի անուն*

վերջում ունենայ որեւէ այլ բաղաձայն, նշանակում է՝ անունը Չինաստանի այլ լեզուներից է (յաճախ՝ հարաւային նահանգների):

**Օրինակներ.** Ergun Երկուց (աւելի ճշգրիտ տառադարձութեան դէպքում կը լինէր Ըրկուեց, կենդանի արտասանութիւնը՝ [ըրկւըց]), Pu'er Փուր (ճշգրիտ արտասանութիւնը՝ [փու-ըր]), Zhao Erlu Չաւ Երլու [ըրլու], Harbin Հարպին (այսօր՝ Հարբին) (առողանութեան նշաններով՝ Hāěrbīn, հնչումը [հա-ըր-պին]):

Ժր) Վանկարաժանում եւ բառարաժանում

Ճենազիրը աւանդաբար գրում են առանց բացատների՝ բոլոր բառերը իրար կից, ինչպէս մի ժամանակ Մերձաւոր Արեւելքում գրում էին բեւեռագրերով (սեպագրերով) եւ հնում ու միջին դարերում՝ եւրոպական բոլոր լեզուներով: Քանի որ հին չինարէնը (չինարէնի գրաբարը) միավանկ լեզու էր, այդպիսի գրութիւնը առանձնապէս դժուար չէր ընթերցել: Լատինագիր փիւնիցը, որը մեր տառադարձութեան աղբիւրն է, որդեգրել է արեւմտեան լեզուների բառաբաժանման արդի սկզբունքը, թէեւ չինարէնի պարագայում յաճախ է հարց ծագում թէ ինչն է մէկ բառ, ինչը՝ երկարմատ կամ եռարմատ բարդ բառ: Պարզեցման օրինակով՝ «գետափ»ը հայերէն կազմուած է «գետ» եւ «ափ» բաղադրիչներից: Հայերէնում «գետափ»ը մի բառով ենք գրում (համարում ենք մէկ բառ), որովհետեւ դա ունի մէկ շեշտ՝ [գետափ]: Չինարէնի պարագայում շատ յաճախ ամէն բաղադրիչ պահում է իր շեշտը եւ երկուսը միասին հնչում են գատ առ գատ՝ [գետ-ափ]: Հայերէնի «այնուամենայնիւ»ը այսօր մեծ մասամբ գրում ենք մի բառով, սակայն անջատ գրութիւնը՝ «այնուամենայնիւ», լիովին արդարացուած է եւ ստուգաբանօրէն աւելի ճիշտ: Ահա սա է բարդութիւնը:

Միշտ չէ որ չինացիներն իրենք գիտակցում են վանկերի ու բառերի գոյութիւնը եւ ճիշտ տեղերում բառահատում կատարում: Փողոցների ցուցանակների վրայ (եւ ոչ միայն) երբեմն ողջ նախադասութիւնը միասին է գրած, առանց բառաբաժանման (խօսքը փինին գրութիւնների մասին է, ճենագրերով գրածները սովորաբար առանց բացատների են):

Մեր տառադարձութիւնը անունները բաժանելու է ըստ փիւնիցի պաշտօնական գրութեան: Օրինակ՝ անուն ազգանունները

գրելու ենք, առաջին մասը՝ ազգանունը, մէկ բառով (սովորաբար՝ մէկ վանկանի), իսկ երկրորդ մասը՝ անձնանունը, մէկ այլ ամբողջական բառով (սովորաբար՝ երկու վանկանի): Օրինակներ. Mao Zedong Մաւ Ծեւոնց, Deng Xiaoping Տեց Ծիաւփինց, Xi Jinping Շի Ճինփինց: Մի ժամանակ անձնանունը (երկրորդ բաղադրիչը) գրել են նաեւ գծիկով, սակայն այսօր պաշտօնական փինինը պահանջում է միացեալ գրուածիւն: Մենք էլ հետեւում ենք դրան, թէեւ լրիւ անջատ գրուածիւնը աւելի լաւ կարտայայտէր չինական հնչումը՝ Մաւ Ծէ Տոց, Տեց Ծիաւ Փինց, Շի Ճինց Փինց (որովհետեւ հայր կը շեշտէր իւրաքանչիւր բաղադրիչը):

Երբ գրաւոր լեզուում պարզ չէ թէ որտեղ է հատում վանկը, փինինը բաժանման տեղում դնում է ապաթարց. Ning'an (ապաթարցը ցոյց է տալիս վանկաբաժանը՝ Նին-անց, այլապէս կարող էր լինել Nin-gan Նինց-կանց), Fu'an, Cheng'en: Քանի որ «yi, wu, yu» ձեւերը գրուում են միայն վանկասկզբին, անորոշուածիւնը կարող է լինել միայն «a, o, e» ձայնաւորներից առաջ: Օրինակ՝ Xi'an քաղաքի անունը բաղադրած է երկու վանկից՝ «xi» (西) եւ «an» (安), ի տարբերութիւն «xian» (先) բառի որ միավանկ է: Մեր տառադարձութիւնը անտեսում է այդ նրբութիւնը: Քաղաքի անունը կը գրենք Ծիանց, ինչպէս եւ կը գրենք «շիանց» բառը: Այլ օրինակներ. Tiān'ānmén Թիանանմենց, Bei'an Պեանց, Jia Ting'an Ճիա Թինանց:

ժէ) այլալեզու անուններ

Չինացիների եւրոպատարազ անունները գերադասում ենք տառադարձել մեզ աւելի հարազատ (ծանօթ) ձեւերով. William Chan Վիլիամ Չանց, Jackie Chan Ջաքի Չանց, Edison Chen Եդիսոն Չեց, Wallace Huo Վալաւս Հո, Tiffany Tang Տիֆանի Թանց, Betty Zhou Բեթի Չոու, Julie Yeh Ջուլի Յե: Մոնղոլակերպ, թուրքակերպ անուններից նշենք՝ Dilraba Dilmurat Դիլրաբա(՞) Դիլմուրատ (-թ), Gulnazar Գուլնազար (Գիւլ-), Arken Imirbaki Արքենց Իմիրբաքի եւ այլն:

Օրինակ՝ փինինագիր Hūlúnbèi'ěr քաղաքի (եւ գաւառի) անունը չինարէն չէ, եւ քաղաքն էլ գտնւում է Չինաստանի Ներքին Մոնղոլաստան կոչուող նահանգում (խառը բնակչութեամբ): Տրամաբանական է, որ անունը տառադարձելիս ձեւը համեմատէինք ասենք՝ մոնղոլերէնի հետ: Դրա համար պէտք է պարզենք

անուան մոնղոլերէն ձեւը (Kölin buyir կամ Хөлөнбуйр, Ёуинбур<sup>o</sup>յր, հայերէն «կիրիկեան» տառադարձութեամբ՝ Խէլէօնբույր): Սա է դժուարութիւնը. պարզ չէ թէ անունը որ լեզուից պէտք է տառադարձել, եւ այդ լեզուն էլ կարող է անհասանելի լինել մեր գրագէտ հասարակութեանը: Եթէ չի նարէնից տառադարձենք (հետեւելով այս յօդուածում որդեգրած կանոններին), կը լինի Հոլլոնպեր:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ**

Նախ եւ առաջ՝ պէտք է հրատարուենք խորհրդային տարիներից ուսներէնի միջնորդութեամբ ժառանգութիւն ստացած «չժ-ցգ» թիւր տառադարձութիւնից: Հաշուի առնելով հանու փիւնի (Hànü Pīnyīn) լայն եւ աւելի ու աւելի տարածուող գործածութիւնը, կ'առաջարկէինք այսու հետեւ հիմնուել հէնց այդ ուղղագրութեան վրայ: Լաւ կը լինէր փիւնիը համեմատել եւ որոշ դէպքերում ճշտել ճուրհի, Վեդ-Ջայլսի եւ Պաղադիոսի (ուսներէն) տառադարձութիւններով: Այս վերջին գաղափարը ուղղուած է բնականաբար միայն ճենագէտներին. լայն հասարակութիւնը ի վիճակի չէ այդքան հեռու գնալու:

Այսպէս՝ չի նարէնի տառադարձութեան սկզբունքներն են.

- ա) անտեսում ենք ճենագրերը եւ առնում ենք չի նարէն անունների պաշտօնական փիւնի գրադարձութիւնը,
- բ) ի բաց ենք նետում բոլոր երանգները (երանգները հաշուի ենք առնում միայն հազուադէպ պարագաներում, երբ երկու անուն նոյն տառադարձումն են ունենում եւ իրար նկատմամբ հակասութեան մէջ են մտնում),
- գ) անունը տառադարձում ենք հայերէն՝ վանկ առ վանկ, ըստ վերը նշած սկզբունքների,
- դ) տառադարձած անունը «յղկում» ենք եւ դնում հայերէնի կաղապարի մէջ, օրինակ՝ բառասկզբին գրում ենք «յա, վա», իսկ բառամիջին՝ «իա, (ո)ւա», բառավերջին «ե»ի փոխարէն գրում ենք «է» եւ այլն՝ համաձայն հայերէնի ուղղագրութեան:

Մեր նախորդ յօդուածների տեսական ամփոփիչ մտքերի մեծ մասը հաւասարապէս վերաբերում է եւ չի նարէնին, եւ այստեղ դրանք չենք կրկնում:

Անհրաժեշտ է հիմնովին վերանայել չինարէնի տառադարձութիւնը եւ ճշտել ու տարածել չինական անունների հայերէն գրելաձեւերը: Օգտակար կը լինէր կազմել համապարփակ մի աղիւսակ (չուրջ 420 վանկերի (բաղաձայն ու յանգ) համակցութեամբ) եւ այն տրամադրել Արտաքին գործոց նախարարութեանը, լրատուական միջոցներին եւ հարցին առնչութիւն ունեցող այլեւայլ կազմակերպութիւնների (աշխարհագրական հիմնարկներ, քարտեսագրական հրատարակչութիւններ, զանազան ուսումնա-վայրեր...): Քանի որ տառադարձութիւնը մէկ մարդով չի որոշուում, ազգովին ընդունելի տառադարձութիւն մշակելու համար պետական եւ գիտական հաստատութիւնները անհրաժեշտաբար իրենց գործուն ներդրումը պէտք է ունենան:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա. – ԱՂԻԻՍԱԿ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՎԱՆԿԱՍԿԻԶԲ ԲԱՂԱԶԱՅՆ ՀՆՁԻՒՆՆԵՐԻ

| Փիմփիմ | ՀՄԸ (IPA) | Ճուրիմ | Վեդ-Ջայլս | Ռուսերէն | Հայերէն |
|--------|-----------|--------|-----------|----------|---------|
| b      | [p]       | ㄅ      | p         | б        | պ       |
| p      | [pʰ]      | ㄆ      | pʰ        | п        | փ       |
| m      | [m]       | ㄇ      | m         | м        | մ       |
| f      | [f]       | ㄈ      | f         | ф        | ֆ       |
| d      | [t]       | ㄉ      | t         | д        | տ       |
| t      | [tʰ]      | ㄊ      | tʰ        | т        | թ       |
| n      | [n]       | ㄋ      | n         | н        | ն       |
| l      | [l]       | ㄌ      | l         | л        | լ       |
| g      | [k]       | ㄍ      | k         | г        | կ       |
| k      | [kʰ]      | ㄎ      | kʰ        | к        | ք       |
| h      | [x], [h]  | ㄏ      | h         | х        | հ       |
| z      | [ts]      | ㄗ      | ts        | цз       | ծ       |
| c      | [tsʰ]     | ㄘ      | tsʰ       | ц        | ց       |
| s      | [s]       | ㄙ      | s         | с        | ս       |
| zh     | [ʃ]       | ㄗ      | ch        | чж       | ժ       |

| Փիմիմ | ՀՄԸ (IPA) | Ճուրիմ | Վեդ-Ձայլս | Ռուսերէն   | Հայերէն |
|-------|-----------|--------|-----------|------------|---------|
| ch    | [tʃʰ]     | չ      | ch'       | ч          | չ       |
| sh    | [ʃ]       | շ      | sh        | ш          | շ       |
| r     | [r~ʀ]     | ր      | j         | ж          | ժ       |
| j     | [tɕ]      | յ      | ch        | цз         | ճ       |
| q     | [tɕʰ]     | կ      | ch'       | ц          | չ       |
| x     | [x]       | խ      | hs        | с          | շ       |
| w     | [w]       | վ      | w         | в          | վ       |
| y     | [j], [ɥ]  | ւ      | y         | я, е, ё, ю | յ / վ   |

**ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ. – ԱՂԻԻՍԱԿ ՎԱՆԿԱՅԱՆԳԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ**

| Փիմիմ | ՀՄԸ (IPA) | Ճուրիմ  | Վեդ-Ձայլս | Ռուսերէն | Հայերէն |
|-------|-----------|---------|-----------|----------|---------|
| -a    | [a]       | Կ       | -a        | -а       | -ա      |
| -e    | [ɛ]       | Ե       | -ê / -o   | -э       | -ե      |
| -ai   | [aj]      | Կի      | -ai       | -ай      | -այ     |
| -ei   | [ej]      | Եի      | -ei       | -эй      | -եի     |
| -ao   | [au]      | Վ       | -ao       | -ао      | -աւ     |
| -ou   | [ou]      | Վ       | -ou       | -оу      | -ով     |
| -an   | [an]      | Վ       | -an       | -ань     | -ան     |
| -en   | [ɛn]      | Ե       | -ên       | -энь     | -են     |
| -ang  | [aŋ]      | Կ       | -ang      | -ан      | -ան     |
| -eng  | [ɛŋ]      | Ե       | -êng      | -эн      | -են     |
| -ong  | [oŋ~oŋ]   | ՎԿ      | -ung      | -ун      | -ոն     |
| -er   | [aɤ]      | Ե       | -êrh      | -эр      | -[ը]ր   |
| -i    | [i]       | Ի       | -i        | -и       | -ի      |
| -i    | [i̥]      | (նչիմչ) | -ih/ü     | -и / -ы  | -ի      |
| -ia   | [ja]      | Ի Կ     | -ia       | -я       | -իա     |
| -ie   | [je]      | Ի Ե     | -ieh      | -е       | -(ի)ե   |
| -iao  | [jau]     | Ի Վ     | -iao      | -яо      | -իաւ    |

| Փիմիմ    | ՀՄԸ (IPA) | Ճուրիմ | Վեղ-Ձայլս  | Ռուսերէմ | Հայերէմ |
|----------|-----------|--------|------------|----------|---------|
| -i[ou]u  | [jou]     | ㄨ      | -iu        | -ю       | -իու    |
| -ian     | [jen]     | ㄩ      | -ien       | -янь     | -իան    |
| -in      | [in]      | ㄣ      | -in        | -инь     | -ին     |
| -iang    | [jan]     | ㄨ      | -iang      | -ян      | -իան    |
| -ing     | [in]      | ㄥ      | -ing       | -ин      | -ին     |
| -iong    | [jɔŋ~jɔŋ] | ㄨ      | -iung      | -юн      | -իոն    |
| -u       | [u]       | ㄨ      | -u         | -у       | -ու     |
| -ua      | [wa]      | ㄨ      | -ua        | -ya      | -ուա    |
| -uo / -o | [wo]      | ㄨ      | -o / -uo   | -o       | -ո      |
| -uai     | [wai]     | ㄨ      | -uai       | -уай     | -ուայ   |
| -u[e]i   | [wei]     | ㄨ      | -ui / -uei | -уй      | -ուի    |
| -uan     | [wan]     | ㄨ      | -uan       | -уань    | -ուան   |
| -u[e]n   | [wən]     | ㄨ      | -un        | -унь     | -ուն    |
| -uang    | [wan]     | ㄨ      | -uang      | -уан     | -ուան   |
| -ü       | [y]       | ㄨ      | -ü         | -юй      | -ու     |
| -üe      | [yɛ]      | ㄨ      | -üeh       | -юэ      | -ուե    |
| -üan     | [yən]     | ㄨ      | -üan       | -юань    | -ուան   |
| -ün      | [yn]      | ㄨ      | -ün        | -юнь     | -ուն    |
| -ê       | [ɛ]       | ㄨ      | -eh        | -э       | -ե      |
| -o       | [ɔ]       | ㄨ      | -o         | -o       | -ո      |

ԱՐՄԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

## Résumé

### LES PRINCIPES DE LA TRANSLITTÉRATION (TRANSCRIPTION) ARMÉNIENNE DES NOMS PROPRES ÉTRANGERS VIII partie – La langue chinoise

ARMEN MICHAELIAN

Le présent article fait partie d'une série qui traite de la translittération (transcription) des noms propres étrangers en arménien (de la façon de transcrire les noms étrangers en caractères arméniens). Les références des sept premières parties déjà parues sont : 1) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part I – Middle Eastern Languages [en arménien], in «Haigazian Armenological Review», 40 (2020), 341-364. 2) Les Principes de la translittération arménienne des noms propres étrangers, II partie – langues classiques (grec ancien et latin) [en arménien], in «Bazmavap», CLXXVIII (2020), N° 1-2, 304-336. 3) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part III – French Language [en arménien], «Haigazian Armenological Review», 41 (2021), 443-466. 4) Les Principes de la translittération arménienne des noms propres étrangers, IV partie – la langue anglaise [en arménien], in «Handes Amsorya», CXXXV (2021), 197-246. 5) Les Principes de la translittération (transcription) arménienne des noms propres étrangers, V partie – la langue allemande [en arménien], in «Bazmavap», CLXXX (2022), N° 1-2, 277-303. 6) Les Principes de la translittération (transcription) arménienne des noms propres étrangers, VI partie – les langues italienne et espagnole [en arménien], in «Bazmavap», CLXXX (2022), N° 3-4, 271-300. 7) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part VII – Russian (Compared to Other Slav(on)ic Languages) [en arménien], «Haigazian Armenological Review», 42 (2022), N° 2, 169-198.

La huitième, présente partie de la série est consacrée à la translittération (transcription) des noms propres de la langue chinoise. Le principe de la translittération est basé (comme dans toute la série) sur l'orthographe classique de l'arménien en écartant rigoureusement la translittération « cilicienne » d'un côté et la « soviétique » de l'autre. Après un rappel des principes phonologiques et or-

thographiques de la translittération arménienne évoqués dans les premiers articles de la série, l'auteur passe au crible les sons et les phonèmes chinois les plus problématiques et propose (en s'appuyant sur de nombreux exemples) une translittération de principe pour chacun d'entre eux.

La série d'articles va continuer avec d'autres langues importantes pour le monde arménien, en particulier le hindi et le japonais.